Ծննդյան 90-ամյակի առթիվ

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

HRAVARD HAKOBYAN
THE ART DEVOTEE

BIOGRAPHICAL REFERENCE SOURCES

Introductory notes by the Corresponding Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia Vigen Ghazaryan and Doctor of Art Theory, Professor Anna Asatryan

Published on the occasion of Professor Hakobyan's 90th anniversary

Yerevan – 2020

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ГРАВАРД АКОПЯН
ПРЕДАННЫЙ СЛУЖИТЕЛЬ ИСКУССТВА

БИОБИБЛИОГРАФИЧЕСКИЙ СПИСОК

Авторы вступительной части – член-корреспондент НАН РА Виген Казарян, доктор искусствоведения, профессор Анна Асатрян

К 90-летию со дня рождения

Ереван – 2020

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ներածականը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Վիգեն Ղազարյանի,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա Ասատրյանի

Ծննդյան 90-ամյակի առթիվ

Երևան – 2020

ՀՏԴ 01:7.072
ԳՄԴ 91.9:85
Հ 177

Հրատարակվում է Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ արվեստագիտության
դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան

Հրավարդ Հակոբյան. արվեստի անխոնջ նվիրյալը.:
Կենսամատենագիտություն.- Եր.:
Հ 177 *«Մատենադարան» հրատ., 2020.- 64 էջ (ներդիր 24):*

Մատենագիտությունն ընդգրկում է Հ. Հակոբյանի 1966-2020 թվականների տպագիր աշխատանքների ցանկը՝ նրա գիտական գործունեությունը բնութա-գրող համառոտ ակնարկով: Ժողովածուում տեղ են գտել նաև Հ. Հակոբյանի գիտական գործունեությունն արժևորող հոդվածներ:

ՀՏԴ 01:7.072
ԳՄԴ 91.9:85

ISBN 978-9939-9237-5-8
© Հակոբյան Հ., 2020
© Մաշտոցյան Մատենադարան, 2020

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ.
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Լրացան Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ծննդյան 90-ամյա և գիտաստեղծագործական գործունեության 60-ամյա հոբելյանները: Հ. Հակոբյանը Ծնվել է 1930-ի սեպտեմբերի 13-ին, Էջմիածին քաղաքում, անվանի մանկավարժ, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Հրաչյա Հակոբյանի ընտանիքում:

1949-ին ավարտելով Հոկտեմբերյան քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը՝ Հ. Հակոբյանն ընդունվում է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարան, որի քանդակագործության բաժինն ավարտում է 1952-ին: 1953-ին Հ. Հակոբյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտում է 1958-ին՝ ստանալով «պատմության մանկավարժ» որակավորում: Այդ կրթօջախներում սովորելու շնորհիվ նա ձեռք է բերում արվեստաբանի համար կարևոր երկու հմտություն՝ նկարչի գեղագիտական աչք և աղբյուրագետի պրպտող միտք: Համալսարանն ավարտելուց հետո մեկընդմիշտ որոշվում է նրա զբաղմունքը՝ հայ միջնադարյան գրքարվեստ և միջնադարագիտություն:

1959-ին Հ. Հակոբյանն աշխատանքի է անցնում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանում՝ որպես կրտսեր գիտաշխատող. հենց այս գիտական օջախի հետ էլ անխզելիորեն կապվում են նրա գիտաստեղծագործական կյանքի հետագա բեղմնավոր տասնամյակները: 1966-ից նա Մատենադարանի գիտական խորհրդի անդամ է, 2016-ից՝ հոգաբարձուների խորհրդի անդամ, իսկ 1986-2012 թվականներին ղեկավարել է Մատենադարանի Միջնադարյան արվեստի բաժինը:

1968-ին Հ. Հակոբյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Վասպուրականի մանրանկարչության դպրոցի սկզբնավորումը և Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1973-ին, ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստանում է ավագ գիտական աշխատողի կոչում՝ «Արվեստի պատմություն» մասնագիտության գծով:

1985-ին Հ. Հակոբյանը Թբիլիսիում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Վասպուրականի մանրանկարչությունը (XIII-XV դդ.)» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 1992-ին,

Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության և գիտության մինիստրության գիտական աստիճանների որակավորման հանձնաժողովի կողմից ստանում է պրոֆեսորի կոչում:

Սկզբից ևեթ Հ. Հակոբյանի հետազոտական գործունեությունը նպատակաուղղված էր այն զուգահեռների բացահայտմանը, թե ինչ էր ներկայացնում Մեծ Հայքի Վասպուրական երկրի գրքարվեստն իր գոյության 5–7 հարյուրամյակներում, ինչ գեղարվեստական, ավելի կոնկրետ՝ մանրանկարչական արժեքներ էր կերտել և ինչ սահմաններում: Անշուշտ, դրան մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ ավարտելով համալսարանը՝ Հ. Հակոբյանն իր ողջ գիտական գործունեությունը և կյանքը կապեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հետ:

Մատենադարանը բուն հայագիտության այն մոգական գիտական օջախն է, որ հրապուրում է գրեթե բոլոր վաստակավոր և նորընծա հայագետներին յուրաքանչյուր ազգից և ամեն երկրից: Դեռևս երիտասարդ հասակում Հակոբյանն ունեցավ այն բարեբախտությունը, որ շփվեց հայ արվեստի խոշորագույն ուսումնասիրողների՝ Լ. Դուռնովոյի, Ս. Տեր-Ներսեսյանի, Ռ. Դրամբյանի, Տ. Իզմայլովայի հետ, որոնց աշխատությունների շնորհիվ հայ միջնադարյան արվեստն իր՝ թեև առայժմ ոչ այնքան մեծ, սակայն կարևոր և հաստատուն տեղը գտավ բազմաթիվ հանրագիտարաններում և մասնագիտական ֆունդամենտալ (հիմնարար) աշխատություններում: Հենց Մատենադարանի բուն միջավայրը հայ միջնադարյան մշակույթի և բանահյուսության այնպիսի գիտակների շնորհիվ, ինչպիսիք են ակադեմիկոսներ Լ. Խաչիկյանը, Ա. Ղանալանյանը, Ս. Արևշատյանը, նվիրյալ բանասերներ Ա. Մնացականյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Անասյանը և ուրիշներ, ստեղծում էր այնպիսի հայաշունչ մթնոլորտ, որ սնում էր շատ ու շատ երիտասարդ գիտնականների և այդ թվում հատկապես Հ. Հակոբյանին: Ըստ էության, դրա շնորհիվ էր, որ Հ. Հակոբյանն առաջինը համարձակություն ունեցավ Վասպուրականի մանրանկարչության պարզության և արխաիզմի (հնադավության) ակունքները մի շարք գծերով բացահայտել կողմնակի նյութի՝ հայ ժողովրդական բանահյուսության և էպոսի միջոցով, որոնք բանալի դարձան հետազոտողի համար անպաճույճ այդ նկարների միջոցով բացահայտելու հիերոգլիֆային, հիպերբոլային և այլաբանական այն ենթալեզուն, որ դարերի խորքից ծվարել է այդ մանրանկարներում և օգնում է հասկանալու դրանց ինքնությունը քրիստոնեական աստվածաբանության, պատկերագրության ու ոճի շրջանակներում:

Տարիներ շարունակ նա զբաղվել է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիր-մատյանների ուսումնասիրությամբ՝ դրան նվիրելով երեք մենագրություն, մեկ ալբոմ[1] և բազում գիտական հոդվածներ: Փաստորեն առաջին անգամ արվեստագիտական հանրությանը ներկայացվեց մեր հայրենիքի ամենահինավուրց և ավանդապահ մարզի արվեստը:

Հ. Հակոբյանի ուսումնասիրությունները մեզ բացահայտեցին Վասպուրականի մանրանկարչության բոլոր դպրոցները, որոնք, կազմելով մի ամբողջություն, զարմացնում են ոճերի ու կերտման ձևերի բազմազանությամբ: Անշուշտ, այդ դպրոցի մասին հայտնի էր դեռևս ֆրանսիացի գիտնական Ֆր. Մակլերի ուսումնասիրություններից: Վասպուրականի և նրա մի հատվածի՝ Խիզանի մանրանկարչությունն արդեն իբրև դպրոց էին դիտում բազմավաստակ գիտնականներ Ռ. Դրամբյանը, Ա. Սվիրինը, Լ. Դուռնովոն, Ս. Տեր-Ներսեսյանը: Հ. Հակոբյանի անձնական ներդրումն այն է, որ նա պատմական և մշակութաբանական-համեմատական ուսումնասիրություններով ոչ միայն բացահայտեց Վասպուրականի տարածքի գլխավոր դպրոցները (Աղթամար, Ոստան, Բերկրի, Վան, Խիզան և այլն), այլև գիտական շրջանառության մեջ դրեց տասնյակ տաղանդավոր վարպետների անուններ, որոնցից մի քանիսը բավարար եղան ատենախոսության նյութ դառնալու ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում (ԱՄՆ, Ֆրանսիա):

Նա ոչ միայն տարբերակեց առանձին դպրոցները, որոնք գործում էին միաժամանակ կամ միմյանց հաջորդելով, այլև գնահատեց ու բնութագրեց ինչպես դպրոցների, այնպես էլ դրանց առանձին ներկայացուցիչների արվեստի գեղարվեստական-պատկերագրական առանձնահատկությունները, փոխադարձ կապերը, կատարողական մաներաները:

Անդադրում պրպտումներից զատ՝ Հ. Հակոբյանի գիտական լուրջ վաստակն արդյունք է որոշակի կարգապահության, կենտրոնացման և հետևողականության. ամեն օր քնել ընդամենը 3-4 ժամ և արթնանալ որոշակի ժամերի ու աշխատել...

Այդ անսովոր ռեժիմը նա պահպանել է տասնյակ տարիների ընթացքում: Դրանից հետո օրը տնօրինում է առօրյան և Աստված: Իսկ առօրյան լի է բազմապիսի գիտական, կազմակերպական և մանկավարժական հոգսերով: Ընդ

---

[1] Տե՛ս Հակոբյան Հրավարդ, Վասպուրականի մանրանկարչությունը, հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976: Հակոբյան Հրավարդ, Վասպուրականի մանրանկարչությունը, հատոր Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982: Акопян Гравард. Миниатюра Васпуракана (XIII-XV вв.). Ереван, Изд.-во АН Арм. ССР, 1989. Հակոբյան Հրավարդ, Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997:

որում, Հ. Հակոբյանի տարիքի առաջացման հետ մեծանում են նաև նրա բազմապիսի հոգսերը և պարտականությունները: Իսկ ժամանակը, ավա՜ղ, չի հարցնում ո՛չ տարիք, ո՛չ հոգնություն, ո՛չ լարվածություն, ո՛չ էլ տարբական դիմացկունություն:

Հ. Հակոբյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերի չորուցամաք ցանկը ցույց է տալիս նրա առօրյայի լարվածության աճը հատկապես վերջին երեք և կես տասնամյակներում: Հ. Հակոբյանի դեպքում կարծես թե գիտական և մանկավարժական բարձր կոչումները նրա համար են, որ մարդուն շնչելու ժամանակ չթողնեն:

1980-ական թվականներից, կապված արցախյան ազատագրական գաղափարների և պայքարի հետ, Հ. Հակոբյանին հանձնարարվեց զբաղվել Արցախի միջնադարյան արվեստի հուշարձաններով: Հմուտ արվեստաբանի տքնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացավ 1989-ին հրատարակված «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII–XIV դարերում» գիրքը[2], որով հայկական մատենական նկարչության մեջ հաստատվեց ինքնատիպ ու հետաքրքրական դպրոցի առկայությունը: Մինչ այդ, ամբողջական պատկերացում չի եղել այդ շրջանի ձեռագրերի մասին: Արվեստագիտական շրջանառության մեջ մտցվեցին մի շարք հազվագյուտ ձեռագրեր:

1991-ին լույս է տեսնում «Արցախի միջնադարյան արվեստը»[3]. սա, ինչպես նաև նախորդ գրքերը, երեք լեզուներով էր: Ինչպես նկատել է ակադեմիկոս Սեն Արևշատյանը. «Այդ գրքերն իրենց պատմաարվեստագիտական ու աղբյուրագիտական բնույթով առաջիններից էին, որ որոշակի նպաստ բերեցին արցախյան պայքարի տեսական հիմնավորմանը»[4]:

Ուշագրավ է, որ Բեռլինում, 1993-ին, Գերմանիայի ավետարանական հոգևոր խորհրդի նախագահ, քահանա, մեծ հայասեր Մանֆրեդ Ռիխտերի և Հ. Հակոբյանի ջանքերով հրատարակվեց «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը ...» կապիտալ հատորը[5], որտեղ Հ. Հակոբյանի հետ համահեղինակներ էին եվրոպացի մի քանի նշանավոր դեմքեր: Եվրոպայում դա առաջին դեպքն էր, երբ Արցախի արվեստն ու քաղաքական խնդիրները ներկայացվում էին համակողմանի և օբյեկտիվ կերպով, այն էլ՝ գերմաներեն լեզվով:

«Իր ուսումնասիրությունների ընթացքում,- նկատում է արվեստագիտության դոկտոր Էմմա Կորխմազյանը,- Հրավարդ Հակոբյանը պարզել է, որ

---

2 Հակոբյան Հրավարդ, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը, Երևան, «Սովետական գրող», 1989:

3 Հակոբյան Հրավարդ, Արցախի միջնադարյան արվեստը, Երևան, «Պարբերական», 1991:

4 Արևշատյան Սեն, Իմ բարեկամի մասին, Հ. Հակոբյանի անձնական արխիվ:

5 Armenisches Berd-Karabach/Arzach (im. Überlebenskampf: christliche Kunst, Kultur, Geschichte, Berlin, Edition Hentrich, 1993 (համահեղինակներ՝ Manfred Richter u. A.).

ֆրանսիացի Գոբելեն եղբայրներից շատ առաջ, նման գործվածքներ պատրաստվել են Հայաստանում, մասնավորապես Արցախում (13-րդ դ.): Ընդ որում, այդ արվեստով զբաղվել են նույնիսկ իշխանական տոհմի կանայք և դուստրեր (Հաթեքքի Վախտանգ իշխանի կինը՝ Արզուխաթունը, և նրա դուստրերը): Արվեստի հուշարձանների կայացնելուն զուգընթաց, հեղինակը, անհրաժեշտության դեպքում, որոշակի տեղ է հատկացնում պատմական անցուդարձերին, քաղաքական իրադարձություններին»[6]*: Գրքի անվիճելի առավելություններից էին մի կողմից՝ նյութն ուղեկցող շուրջ 45 գունավոր և նույնքան էլ սև ու սպիտակ որակյալ արտատպությունները, որոնց մեծ մասն առաջին անգամ է ներկայացվում Եվրոպայի ընթերցողներին, իսկ մյուս կողմից՝ ներկայացված մի շարք կարևոր փաստաթղթերը, ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Արցախի պատմական քարտեզները, Լեռնային Ղարաբաղ-Արցախ նահանգի հետ կապված բազմաթիվ փաստաթղթերը, սկսած 1919 թվականից մինչև մեր օրերը (դրանց թվում են նաև Սումգայիթի ողբերգության զոհերի ցուցակները):*

Այս գիտական աշխատությունների համար Հրավարդ Հակոբյանը 1996 թվականին արժանացավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարների խորհրդի՝ հայ մեծ պատմիչ Եղիշեի անվան մրցանակին:

Ինչպես նկատում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը. «Հայկական սրբապատկերները վաղուց էին կարոտ գիտական հանգամանալից ուսումնասիրման: Արդեն մի քանի տասնամյակ դրանք եղել են ռուս և եվրոպացի գիտնականների հետևողական քննության առարկան: Մինչդեռ մեզանում, Հ. Հակոբյանի մենագրությունը տվյալ թեմայով ձեռնարկված առաջին աշխատությունն է»[7]*:*

Խոսքը միջնադարյան արվեստի ուսումնասիրության բնագավառում գիտական լուրջ արժեք ներկայացնող գրքի՝ 2003-ին լույս ընծայված «Հայոց տերունական սրբապատկերները»[8] *գիտաուսումնական կարևոր աշխատության մասին է, որը նյութի ընդգրկմամբ, վերլուծությամբ և մատուցման խորությամբ, ծանրակշիռ ներդրում դարձավ հայկական սրբապատկերի ուսումնասիրման բնագավառում: Այդտեղ, Ա. Սեդրակյանի «Հայաստանեայց եկեղեցու պատկերագրութիւն» (1904) հատորից 100 տարի անց, նորանոր մատենագրական, պատմական վկայությունների և բազմապիսի համեմատական ու իրական*

---

6 Կորիմազյան Էմմա, Խնամյալ ու մտացի հրատարակություն, «Հայաստանի Հանրապետություն», փետրվար, 1994:

7 Աղասյան Արարատ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից «Հանրապետության նախագահի մրցանակ»-ը շնորհող հանձնաժողովին, Հ. Հակոբյանի անձնական արխիվ:

8 Հակոբյան Հրավարդ, Հայոց Տերունական սրբապատկերները, Երևան, «Զանգակ - 97», 1999:

նյութերի օգտագործմամբ, Հ. Հակոբյանը բնութագրում է հայկական սրբապատկերի առանձնահատկությունները, ցույց տալիս, որ հայերի մեջ սրբապատկերներն ունեցել են իրենց կարևոր դերը, նրանց կոմպոզիցիոն և պատկերագրական յուրահատկությունն արտահայտվել է նաև մանրանկարչության և որմնանկարչության մեջ: Նկատի ունենալով նյութի ծավալը՝ հեղինակն աշխատության մեջ քննության է առել միայն Հիսուս Քրիստոսի, Ս. Խաչի և Ս. Աստվածամոր պատկերները: «Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է քրիստոնեական պատկերագրության սկզբնավորումը, պատմական վկայությունների, ավանդության և քրիստոնեական ծեսի ուսումնասիրությամբ քննության առել գաղափարական այն հենքը, որի վրա զարգացավ սրբապատկերը: Այս աստվածաբանական-գեղարվեստական համակարգի միջոցով էլ գնահատվել են սրբապատկերի էությունն ու նշանակությունը»[9]*:*

Այս հրատարակությունը, ինչպես նշել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկի հայկական բաժանմունքի նախկին տնօրեն Զ. Եկավյանը՝ «Միջնադարյան հայ գեղարվեստը մեզի կը ներկայացնի գիտական համակողմանի և խորագնին վերլուծությամբ՝ հայոց սրբապատկերներին տալով պատմագիտական արժեք և ճանաչողություն»:

2007-ին լույս է տեսնում Հ. Հակոբյանի (համահեղինակ՝ Ավո Հովհաննիսյան) «Նոր Ջուղայի խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքները 17-18-րդ դդ.» ուսումնասիրությունը[10]*, որտեղ «Նոր Ջուղայի որմնանկարչական արվեստը դիտարկվում է նոր շրջանի արևմտաեվրոպական ու արևելյան ավանդական զարդարվեստի հետ տարված զուգահեռներում, ինչպես նաև կարևոր անդրադարձ է կատարում այն հարցին, թե Հին Ջուղայի, և ընդհանրապես Նախիջևան աշխարհի մշակութային ավանդներն ինչպես շարունակվեցին Նոր Ջուղայում»*[11]*:*

Հատկապես ուշադրության է արժանի Հ. Հակոբյանի գիտական համագործակցությունը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Ղազարյանի հետ: Նրանց համահեղինակությամբ 2012 թվականին հրատարակված «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն»[12] *հիմնարար աշխատության մեջ, որը կարևոր քայլ էր հայ կերպարվեստի ամբողջական պատմության շարադրման շրջանակներում, լուսաբանվել է հայ միջնադարյան կերպարվեստի պատմական ուղին: Ուսումնասիրության մեջ առանձնացված են ճարտարապետական քանդակա-*

---

9 Ավետիսյան Ավետ, Հայոց տերունական սրբապատկերները, «Քրիստոնյա Հայաստան», սեպտեմբեր, 2003:

10 Հակոբյան Հրավարդ, Հովհաննիսյան Ավո, Նոր Ջուղայի խոջաների ապարանքների գեղարվեստական հարդարանքը, Երևան, հեղինակային հրատ., 2007:

11 Դևրիկյան Վարդան, Չթուլացող եռանդով, «Ազգ», սեպտեմբեր, 2010:

12 Ղազարյան Վիգեն, Հակոբյան Հրավարդ, Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, «Զանգակ», 2012:

զարդումը, վաղ միջնադարյան կոթողները, խաչքարերը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը և սրբապատկերը՝ զարդային և ֆիգուրատիվ արվեստը:

Նրանց համահեղինակությամբ, 2019-ին հրատարակվեց «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումն և զարգացման ընթացքը» մենագրությունը[13]: Սա առաջին դեպքն է, երբ ստվարածավալ հատոր է նվիրվում հայ միջնադարյան արվեստի թերևս ամենահարուստ բնագավառի՝ հայկական մանրանկարչության պատմությանը: Հեղինակներն անդրադարձել են հայկական մանրանկարչության առավել արժեքավոր նմուշներին, բացահայտել դրանց թեմատիկ, պատկերային ու ոճական առանձնահատկությունները, շրջանառության մեջ դրել նորահայտ նյութեր:

Իսկ դրանից տարիներ առաջ՝ 2009-ին, լույս էր տեսել Արարատ Աղասյանի, Հրավարդ Հակոբյանի, Մուրադ Հասրաթյանի և Վիգեն Ղազարյանի «Հայ արվեստի պատմություն» գիրքը[14], որն ամփոփում է հայ արվեստի գլխավոր ճյուղերի, այսպես կոչված «պլաստիկ արվեստների»՝ ճարտարապետության և կերպարվեստի զարգացման պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Եվ հատկանշական է, որ վերը նշված գիտնականները «Հայ արվեստի պատմություն» աշխատության համար, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրով, արժանացան 2009 թվականի Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի պատվավոր կոչման՝ կերպարվեստի ոլորտում:

1989-ին Հ. Հակոբյանը համատեղության կարգով հրավիրվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, նախ՝ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000-ից՝ ամբիոնի պրոֆեսոր:

Այսուհետ, հետազոտող գիտնականի գործունեությունը քայլելու էր համընթաց մանկավարժական աշխատանքի, բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման և գիտամեթոդական գրադարանի ստեղծման հետ: Հետամուտ ուսանող երիտասարդության արվեստագիտական իմացության և գեղարվեստական դաստիարակության շնորհակալ գործին, Հ. Հակոբյանը լույս ընծայեց «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց ծրագիրը» և իր բնագավառում աննախադեպ՝ «Կերպարվեստը հայոց կրթարաններում»[15] արվեստի ուսուցման պատմության առաջին հատորը, որը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի գնահատմամբ.

---

13 Հակոբյան Հրավարդ, Ղազարյան Վիգեն, Հայկական մանրանկարչություն, սկզբնավորումն և զարգացման ընթացքը, Երևան, «Տիգրան Մեծ», 2019:

14 Աղասյան Արարատ, Հակոբյան Հրավարդ, Հասրաթյան Մուրադ, Ղազարյան Վիգեն, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2009:

15 Հակոբյան Հրավարդ, Կերպարվեստը հայոց կրթարաններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:

«Հավակնում է նաև ազգային կերպարվեստի ուսուցման ձեռնարկի դեր կատարելու, և այս առումով նրա երևան գալը, իհարկե, երևույթ է, քանզի շեշտվում է իր նախորդը չունենալու իրողությունը: Գրքի առաջին հատորը ժամանակային առումով բաժանված է երեք գլուխների՝ «Ուրարտուի կամ Արարատյան թագավորության շրջան», «Հելլենիստական շրջան» և վերջին գլուխը՝ «Միջնադար»»[16]: Հեղինակը հիմնավորել է, որ Գլաձորի համալսարանը եղել է առաջնակարգ բարձրագույն կրթօջախ և հիմնադրվել է ավելի վաղ, քան Պրահայի, Փարիզի և Քեմբրիջի համալսարանները: Գրքի էջերում տեղ են գտել հայ կերպարվեստի այնպիսի երևելի դեմքեր, ինչպիսիք են՝ Մանվել ճատարապետը, Մոմիկը, Թորոս Ռոսլինը և ուրիշներ[17]:

Բեղուն է Հրավարդ Հակոբյանի հասարակագիտական գործունեությունը: Նա մի շարք բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Մատենադարան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևանի Հյուսիսային համալսարան) գիտական խորհուրդների անդամ է, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի «Արվեստի պատմություն և տեսություն» առարկայի պետական քննությունների հանձնաժողովի նախագահ:

Ծանրակշիռ է գիտական-մանկավարժի վաստակը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական ատենախոսություններ ինչպես արվեստաբանության, այնպես էլ մանկավարժության գծով: Հակոբյանի սաները շարունակում են իրենց հայագիտական գործունեությունն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում՝ ԱՄՆ և Ֆրանսիա (Սորբոնի համալսարան):

Երկար տարիներ՝ 1990 թվականից, Հ. Հակոբյանը Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի «Հայաստան-Իտալիա» ընկերության փոխնախագահն է: Այդ գործունեության արդյունքներից մեկը դարձավ 2005-ին լույս տեսած «Հայերը և Իտալիան» գիրքը[18], որտեղ լուսաբանել է հայ-իտալական գեղարվեստական հարուստ ու հարյուրամյակների պատմություն ունեցող առնչությունները:

Ամփոփելով ասենք, որ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանն իր կյանքն անմնացորդ նվիրել է գիտությանը և մանկավարժությանը, ոչ միայն տասնյակ գրքերով ու հոդվածներով, այլև միջազգային մի

---

16 Դոլուխանյան Աելիտա, Հայ կերպարվեստի ուսուցման առաջին հատորը, «Հայաստան», հունիս, 1998, N 65:

17 Տե՛ս Դոլուխանյան Աելիտա, Հայ կերպարվեստի ուսուցման առաջին հատորը, «Հայաստան», հունիս, 1998, N 65:

18 Հակոբյան Հ., Հայերը և Իտալիան, Երևան, «Զանգակ - 97», 2005:

շարք սիմպոզիումներում ներկայացրել և պրոպագանդել է հայ միջնադարյան արվեստը, ստեղծել արժեքներ, որոնք մեծապես հարստացնում են հայագիտությունն ու հայ արվեստագիտական իմացությունը: Իբրև մանկավարժ՝ տարիներ շարունակ շփվել է ուսանողության և ասպիրանտների հետ, ստեղծել համաշխարհային և հայ արվեստի միակ ուղեցույցը հայ աշակերտների և ուսանողների համար, բարձր է գնահատվել գործընկերների կողմից և իր հերթին՝ ըստ արժանվույն գնահատել նրանց վաստակը:

Հ. Հակոբյանի գործունեության կարևոր էջերից է համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ, որը սկիզբ է առել տասնամյակների հեռվից: Բավական է նշել, որ արվեստաբանը մասնակցել է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած Հայ արվեստին նվիրված միջազգային Երկրորդ (Երևան, 1978), Երրորդ (Իտալիա, 1981) և Չորրորդ (Երևան, 1985) սիմպոզիումների աշխատանքներին: Նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի հրավիրված անդամ է 2003 թվականից, իր ստեղծման օրից՝ 1996 թվականից ի վեր, Ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի անդամ է: Նրա գիտական ղեկավարությամբ իրենց թեկնածուական ատենախոսություններն հաջողությամբ պաշտպանել են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ Լիլիթ Մելիքյանը, հայցորդներ Սյուզաննա Գրիգորյանն ու Սոֆի Խաչմանյանը (ԱՄՆ), ինչպես նաև Մատենադարանի ավագ գիտաշխատող Էդգա Վարդանյանը, Ավետ Ավետիսյանը, Լիլիթ Իսկոյանը, Ալիս Թեյլորը (ԱՄՆ) և այլք: Որպես պաշտոնական ընդդիմախոս, նա դեպի մեծ գիտություն ճանապարհ է հարթել բազմաթիվ հայցորդների համար, որոնք այսօր հայ արվեստագիտության արժանի հերթափոխն են:

Հայրենիքը բարձր է գնահատել Հ. Հակոբյանի գիտական ու գիտամանկավարժական վաստակը: Նա 2006-ին արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման, պարգևատրվել Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրով (2003), ՀՀ ԳԱԱ նախագահության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի պատվոգրերով (2005), Արցախի պետական համալսարանի ոսկե մեդալով (2006), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի Ոսկե մեդալով (2009), Թեքեյան մշակութային միության «Ադամանդակուռ Արարատ» ոսկյա շքանշանով (2010), Ալ. Մյասնիկյանի անվան ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հոբելյանական մեդալով (2010), իսկ 2005-ին, ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ:

Հ. Հակոբյանի վաստակը բարձր է գնահատվել նաև Սփյուռքում, մասնավորապես՝ սփյուռքահայ մամուլի էջերում: Այս առումով բնորոշ են Բեյրութի «Ազդակ» թերթի խմբագրականի հետևյալ տողերը. «Եթե մի ակնարկ նետենք

հայրենի արվեստաբանության ականավոր դեմքերից դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ստեղծագործական վաստակի վրա, կտեսնենք, որ նա առանց իր անվան շուրջ աղմուկ ստեղծելու գրել և հրատարակել է ուշագրավ և հայ մշակույթի համար մնայուն արժեք ներկայացնող մի շարք ուսումնասիրություններ ու մենագրություններ, առանց որոնց հնարավոր չէ ուսումնասիրել հայ միջնադարյան արվեստը»[19]*:*

Այժմ էլ գիտականը լի է կենսական ավյունով և գիտական-ստեղծագործական ծրագրերով:

Մեկ անգամ ևս ջերմորեն շնորհավորելով մեր գործընկերոջը պայծառ հոբելյանի կապակցությամբ՝ մաղթում ենք քաջառողջ կյանքի բազում տարիներ և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

---

[19] «Ազդակ», 22 հունվարի, 2002:

ՀՐԱՎԱՐԴ ՀՐԱՉՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1930	*Ծնվել է սեպտեմբերի 13-ին Էջմիածին քաղաքում, անվանի մանկավարժ, ՀՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Հրաչյա Հակոբյանի ընտանիքում:*
1936	*Ընտանիքի հետ տեղափոխվել է Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր քաղաք)*
1949	*Ավարտել է Հոկտեմբերյան քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարան:*
1952	*Ավարտել է Գեղարվեստական ուսումնարանի քանդակագործության բաժինը (դիպլոմ № 272469, ղեկ. Ժողովրդական նկարիչ Գրիգոր Ահարոնյան):*
1953	*Ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ:*
1958	*Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը՝ ստանալով «պատմության մանկավարժ» որակավորում (դիպլոմ № 407221):*
1959	*Աշխատանքի է անցել ՀՍՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանում՝ որպես կրտսեր գիտաշխատող:*
1966-ից	*Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի անդամ:*
1968	*Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Վասպուրականի մանրանկարչության դպրոցի սկզբնավորումը և Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (ղեկ. Լ. Ա. Դուրնովո):*
1973	*ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է ավագ գիտական աշխատողի կոչում՝ «Արվեստի պատմություն» մասնագիտության գծով:*
1975	*Մասնակցել է միջնադարյան արվեստին նվիրված համամիութենական գիտաժողովին (Լենինգրադ):*
1976	*Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական միության կողմից գործուղվել է Իտալիա:*
1978	*Մասնակցել է հայ արվեստին նվիրված 2-րդ միջազգային սիմպոզիումին (Երևան):*
1981	*Մասնակցել է հայ արվեստին նվիրված 3-րդ միջազգային սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա):*

1985	Մասնակցել է հայ արվեստին նվիրված 4-րդ միջազգային սիմպոզիումին (Երևան):
	Թբիլիսում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վասպուրականի մանրանկարչությունը (XIII-XV դդ.)» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:
1986-2012	Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի «Միջնադարյան արվեստի» բաժնի ղեկավար:
1986	Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի կողմից գործուղվել է Գերմանիա:
1989-2008	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ:
1990	Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի «Հայաստան-Իտալիա» ընկերության փոխնախագահ:
1992	Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության և գիտության մինիստրության գիտ. աստիճանների որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է պրոֆեսորի կոչում:
1992-2017	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:
1993	Հրավիրվել է Բեռլին՝ մասնակցելու իր "Armenisehes Berd-Karahach" (Arzach) գրքի շնորհանդեսին:
1995-ից	ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ:
1995-2010	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աստիճանաշնորհման 020 մասնագիտական խորհրդի անդամ:
1996	Արժանացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարների հայ մեծ պատմիչ Եղիշեի անվան մրցանակին:
1999-2012	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական աստիճանաշնորհման 029 մասնագիտական խորհրդի անդամ:
2003-ից	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի հրավիրված անդամ:
2004	Պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Խաչատուր Աբովյան» ոսկե մեդալով:

2005	*Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրով:*
	Պարգևատրվել է Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի պատվոգրով:
	Ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ:
2006	*Ընտրվել է Հայաստանի նկարիչների միության անդամ:*
2006	*Արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:*
	Պարգևատրվել է Արցախի պետական համալսարանի ոսկե մեդալով:
2009	*ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրով արժանացել է 2009 թվականի Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի պատվավոր կոչման կերպարվեստի ոլորտում՝ «Հայ արվեստի պատմություն» աշխատության համար:*
	Պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:
	Պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի Ոսկե մեդալով:
2010	*Պարգևատրվել է Թեքեյան մշակութային միության «Ադամանդակուռ Արարատ» ոսկյա շքանշանով:*
	Պարգևատրվել է Ալ. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հոբելյանական մեդալով:
2014-ից	*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ:*
2016-ից	*Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հոգաբարձուների խորհրդի անդամ:*

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. մենագրություններ

Վասպուրականի մանրանկարչությունը, հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, 162 էջ

Վասպուրականի մանրանկարչությունը, հատոր Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982, 164 էջ

Armenian Miniatures of the 13th and 14th centuries, Leningrad, "Aurora Art Publishers, 1984 (համահեղինակներ՝ Իրինա Դրամբյան, Էմմա Կորխմազյան), 200 p.

Армянская миниатюра (по памятникам Матенадарана), Ереван, 1987, "Советакан грох" (соавтор – Эмма Корхмазян), 56 стр.

Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը, Երևան, «Սովետական գրող», 1989, 155 էջ

Миниатюра Васпуракана (XIII-XV вв.), Ереван, АН Арм. ССР, 1989, 112 стр. + 68 илл.

Արցախի միջնադարյան արվեստը, Երևան, «Պարբերական», 1991, 98 էջ

Armenisches Berd-Karabach/Arzach (im. Überlebenskampf Christische Kunst-Kultur-Ceschichfye, Berlin, Edition Hentrich, 1993 (համահեղինակներ՝ Manfred Richter u. a), 175 p.

Կերպարվեստը հայոց կրթարաններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 143 էջ

Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, 160 էջ

Հայոց Տերունական սրբապատկերները, Երևան, «Զանգակ - 97», 1999, 189 էջ

Հայերը և Իտալիան, Երևան, «Զանգակ - 97», 2005, 62 էջ

Նոր Ջուղա. խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII – XVIII դդ.), Երևան, հեղինակային հրատ., 2007 (համահեղինակ՝ Ավո Հով-հաննիսյան), 210 էջ

Հայ արվեստի պատմություն (հին ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, «Զանգակ - 97», 2009 (համահեղինակներ՝ Արարատ Աղայան, Մուրադ Հասրա-թյան, Վիգեն Ղազարյան), 574 էջ

Художественное образование в Армении: перспективы развития творческого потенциала в XXI веке, Ереван, 2010 (соавторы – Г. Погосян, А. Агасян, Л. Никоян, А. Арутюнян, С. Саакян), 96 стр.

Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, «Զանգակ - 97», 2012 (համահեղինակ՝ Վ. Ղազարյան), 259 էջ

Հայկական մանրանկարչություն, սկզբնավորումն և զարգացման ընթացքը, Երևան, «Տիգրան Մեծ», 2019 (համահեղինակ՝ Վ. Ղազարյան), 287 էջ

Բ. պատկերագրքեր

Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (երեք լեզվով), Երևան, «Սովետական գրող», 1978, 179 էջ

Армянская миниатюра (коллекция Матенадарана), на 3 языках, Ереван, "Наири", 2009 (соавторы – Л. Закарян, И. Дрампян, Э. Корхмазян), 310 стр.

Արցախի մանրանկարչական արվեստը (երեք լեզվով), Երևան, «Նաիրի», 2014, 179 էջ

Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը, Երևան, 2014, 458 էջ (համահեղինակ՝ Ռ. Միրզախանյան)

Գ. գրքույկներ

Некоторые особенности художественного языка рукописей Васпуракана. Ереван, Изд-во АН Армянской ССР, 1978, 10 стр.

Certaines particularités du langage esthètique des manuscrits du Vaspourakan. Yerevan, 1978, 10 p.

Հայկական մանրանկարչություն. Վասպուրական, Երևան, «Սովետական գրող», 1983, 20 էջ

Миниатюра Васпуракана (XIII-XV вв.), автореферат докторской диссертации, Тбилиси, 1984, 41 стр.

Tage der Ud SSR' 86 Armenische Malerei Mittelterliche Buchkunst kinderzeich nangen dekorative volks kunst, Berlin, Haus der Kirche, 1986

Հարություն Հովհաննիսյան, կատալոգ, Երևան, 1992

Համաշխարհային և հայ արվեստի պատմության ծրագիր-ուղեցույց, Երևան, 1993 (համահեղինակ Մ. Հասրաթյան)

Ստեփան Գրիգորյան, կատալոգ, Երևան, 2001

Հայկական Մանրանկարչություն. ուսումնամեթոդական բնույթի ձեռնարկներ և ժողովրդական ավանդական մոտեցումը, Երևան, Մանկավարժական համալսարան, 2019 (համահեղինակ Ս. Ջանիկյան), 76 էջ

Հայ արվեստի աշխարհում, Երևան, «Նաիրի», 1998, 64 էջ

Դ. հոդվածներ գիտական հանդեսներում և ժողովածուներում

Մանրանկարիչ Զաքարիա Աղթամարցի, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 199-209

Աղթամարի մանրանկարչության սկզբնավորման և նրա ակունքների հարցի շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1966, № 10, էջ 42-50

Հայկական մանրանկարչութիւն. Միխիթարեան մատենադարան ձեռագրաց, Ա, Վենետիկ, 1966, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 264-269

Ավետարանական պատկերագրության առանձնահատկությունները Վասպուրականում, «Էջմիածին», էջմիածին, 1971, № 4, էջ 52-58

Մանրանկարիչ Կիրակոս քահանան, «Էջմիածին», էջմիածին, 1973, № 3, էջ 48-53

Գիտական նստաշրջան՝ նվիրված Լ. Ա. Դուռնովոյի հիշատակին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 317-318

Գրիգոր Տաթևացին արվեստի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 4, էջ 105-112

Ծաղկող Ծերուն քահանա, «Էջմիածին», էջմիածին, 1974, № 3, էջ 28-33

Հովհաննես Խիզանցի, «Էջմիածին», էջմիածին, 1974, № 11, էջ 51-58

Վասպուրականի մանրանկարչության դպրոցի մասին, «Հայկական արվեստ», Երևան, 1974, № 1

Գրիչ և մանրանկարիչ Կարապետ քահանա, «Էջմիածին», էջմիածին, 1975, № 4, 46-51

Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ծերենց) մանրանկարիչ, «Էջմիածին», էջմիածին, 1975, № 12, էջ 47-54

Մատենադարանի № 4813 Ավետարանը, «Էջմիածին», էջմիածին, 1976, №7, էջ 31-36

Վասպուրականի մանրանկարչության ժողովրդական բնույթը, «Խորհրդային Հայաստան» հանդես, Երևան, 1976, էջ 11-12

Վասպուրականի մանրանկարչությունը, «ժամանակ», Ստամբուլ, 1977, № 4-10

Մի քանի ընդհանրություններ Վասպուրականի մանրանկարչության և Կապադովկիայի որմնանկարների միջև, «Բանբեր Մատենադարանի», № 12, Երևան, 1977, էջ 50-68

Некоторые особенности художественного языка рукописей Васпуракана, II международный симпозиум по армянскому искусству, Ереван, 1978, стр. 104-109

Գիրը Վասպուրականի մանրանկարչության մեջ. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 9, էջ 87-97

Վասպուրականի մանրանկարիչ Պսակ աբեղա, «Էջմիածին», էջմիածին, 1979, № 12, էջ 39-44

La Grande arte delle piccole immagini "Realta Sovietica", Roma, 1979, էջ 42-46

L'Ecole des miniaturistes du Vaspourakan "Archeologia", Paris, 1979, էջ 26-33

Հայերը Կապադովկիայի մեջ, «ժամանակ», Բեյրութ, 1981

Творческие связи, Материалы IV международного симпозиума Грузинского искусства, Тбилиси, 1983

Фрагменты миниатюр рукописи селения Арег, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1984, №3, էջ 154-161 (соовтор – Т. Измейлова)

Մանրանկարիչ Վարդան Արծկեցի. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1984, № 5, էջ 50-57

L'école de miniature de l'Artsakh historique (XIIIe-XIVe siècles), ATTI. Del terzo Simposio internazionale di arte Armena. 1981 Milano /Vicenza/ Castelfranco V. /Plazzola sul Brenta/ Venezia. 25 settembre – 1 ottobre, San Lazzaro-Venezia, 1984, p. 257-268

Ռշտունիքի Ս. Հակոբի վանքի որմնանկարները. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, № 9, էջ 69-77

Վարդան Արծկեցի, «Հայաստան», հանդես, 1986, № 4

Մանրանկարիչ Մելքիսեդեկ, «Հայաստան», հանդես, 1986, № 2

Армянский гобелен. Традиции и их возрождение "Искусство", Москва, 1989

Миниатюра Арцаха-Утика (XIII—XIV вв.). «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, № 3, стр. 3-15

Մատենադարան, «Հայաստանի Հանրապետություն» հանդես, 1992, հունվար, № 9

Վարագի սբ. Գևորգ եկեղեցու ժամատան որմնանկարները, «Հուշարձան», Բ, Երևան, 1993

The Greatness of Small Pictures. Armenian Miniatures "Inter Press", Budapest, 1993, p. 62-78

Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցու թիվ № 18 նկարազարդ ավետարանը, «Շողակաթ», Ստամբուլ, 1995, էջ 18-22

«Էկֆրազիս» ժանրը հայ պատմագրության և արվեստի մեջ, «Հայագիտական հանդես», 1998, № 1

Տերունական սրբապատկերները ձեռագիր-մատյաններում, «Աստվածաշնչական Հայաստան», 1999

Minijatyre Арцаха-Утика. XIII-XIV, "Култуга - 001", Beolgrad, 1999, p. 94-98

Արցախի կիրառական արվեստները, «Արծիւ», Լոս Անջելես, 2000, № 163-164

Արցախի միջնադարյան մշակույթը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2001, № 1

Ռուսաստանի գեղարվեստական կենտրոնները և հայ նկարիչները, «Հայ-ռուսական հարաբերություններն ու արդիականությունը», Երևան, 2002

Մշակութային ընդհանուր միջավայրի դերը անհատի գեղագիտական նախասիրության և ազգային արժեքների ստեղծման գործում, «Գեղարվեստական միտք», Երևան, 2002

Նկարչության առարկայի դասավանդման խնդիրները XIX դ. հայկական դպրոցում, «40 տարի արվեստի աշխարհում», Երևան, 2002

Նարեկյան վերելքի շրջանի և Գրիգոր Նարեկացու դիմանկարի շուրջ, «Մատյան ողբերգության - 1000», Երևան, 2003

1915 թ. Մշակութային եղեռն, «Հայագիտական հանդես», Երևան, 2005

Մաշտոցյան գիրը մանրանկարչության մեջ, «Հայագիտական հանդես», Երևան, 2005

Արցախի ձեռագիր մատյանների արվեստի մասին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2007, էջ 373-377

Проблемы преподавания рисования в средневековых университетах Армении и непрерывность их принципов (Международная научно-методическая конференция (сборник статей), Самара, 2008

Հայ նոր արվեստի սկզբնավորման շրջանից. Նոր Ջուղա, (ժողովածու նվիրված Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի 85-ամյակին), Երևան, 2008

Կերպարվեստ, Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, «Զանգակ 97», 2010, էջ 132-145

Վիգեն Ղազարյան. գիտնականի ուղին. Լրաբեր հասարակական գիտություններ, 2018, № 1, էջ 344-345

Մեծ Հայրենականի արձագանքները արվեստի պատմության մեջ, «Բանբեր հայագիտության», հայագիտական միջազգային հանդես, 2019, № 3 (21), էջ 165-170

Հեղինակն ունի ևս մի քանի տասնյակ հոդվածներ տպագրված հանրագիտարաններում և այլուր (զանազան գիտաժողովների ու կոնֆերանսների), որոնց նյութերի հավաքումն անհնարին եղավ ժամանակի սղության պատճառով:

Ե. Հոդվածներ թերթերում

Հայերը Կապադովկիոյ մէջ, «Ժամանակ», 1979, հունիս

Անունը Խաչիկ վարպետ, «Հայրենիքի ձայն», 1983, նոյեմբեր

Մատենադարան, «Հայաստանի Հանրապետություն», 1990, սեպտեմբեր

Չկորվենք ազգային ավանդույթներից, «Հայաստան», 1991, հունվար

Բարեկիրթ մարդ և նոր միայն մասնագետ, «Հայաստան», 1992, ապրիլ

Հայաստանի բարեկամը (Մանֆրեդ Ռիխտեի մասին), Ավանգարդ, 1992, ապրիլ

Կրկին բուհերի ու բուհական աշխատողների հոգսերի մասին, «Հայաստան», 1998, ապրիլ

Գեղարվեստական գիտելիքները պարտադիր են լինելու ուսանողության համար, «Հայաստանի հանրապետություն», 2003, հոկտեմբեր

Հայ մանկավարժության անմնան երախտավորներին քիչ են հիշում իրենց հայրենիքում, «Մանկավարժական համալսարան», 2005

Մի կրանքի անհատնում նվիրում, «Ազգ», 2008, հունիս

Պահպանենք մեր ազգային արժանապատվությունը, «Ազգ», 2011, ապրիլ

Անհանդուրժողականությունը ազգային աղետի է վերածվում, «Ազգ», 2011, դեկտեմբեր

Ասատուր Մնացականյան, «Ազգ», 2012, հուլիս

Արևելյան ձեռագրերի գրության արվեստն ու մանրանկարչությունը, «Հայաստանի Հանրապետություն», 2012, նոյեմբեր

Համալսարանի պատմության գեղեցիկ էջերից մեկը, «Մանկավարժական համալսարան», 2013, հունվար

Փակել խոտանի ճանապարհը, «Ազգ», 2013, դեկտեմբեր

Պայծառ անհատականություն (Փարավոն Միրզոյանի մասին), «Մանկավարժական համալսարան», 2015, հունվար

Տաղանդաշատ ընկերս, «Կերպարվեստ», 2016, հուլիս

Անունը՝ Խաչիկ վարպետ, «Հայաստանի Հանրապետություն», 27 դեկտեմբերի, 2019

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ԺԷ. 00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ)

Վարդանյան Էդգա Բորիսի – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հայցորդ, «Մինաս Ծաղկող (XV դար, Վասպուրական)», 25 հոկտեմբերի 2000

Հակոբյան Արա Հրավարդի – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայցորդ, «Վարդան Մախոխյան (կյանքը և գործունեությունը)», 12 սեպտեմբերի 2001

Մելիքյան Լիլիթ Ռաֆայելի – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ, «Դիզայնի ձևավորման գեղարվեստակիրառական և հասարակական նախադրյալները Հայաստանում 1960-80-ական թվականներին», 12 հունիսի 2014

Գրիգորյան Սյուզաննա Սերգեյի – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, «Հայկական խճանկարչության գեղարվեստական ձևաստեղծման եղանակները», 31 հունվարի 2019

Խաչմանյան Սոֆի Հմայակի – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, «Կաթողիկոսական հանդերձանքի խորհրդաբանությունը և նրա պատկերագրությունը միջնադարյան մանրանկարչության մեջ», 28 հունիսի 2019

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ
ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրավարդ Հակոբյան. Կենսամատենագիտություն, Երևան, «Զանգակ-97», 2005, 24 էջ

Արմենյան Ռաֆայել, Ուսումնասիրվում է ծաղկողների արվեստը, «Հայրենիքի ձայն», 1977, մարտ, № 9

Ղազարյան Մանյա, Կորխմազյան Էմմա, Վասպուրականի մանրանկարչությունը, «Սովետական Հայաստան», 1977, ապրիլ

Ղազարյան Վիգեն, Վասպուրականի մանրանկարչության նոր հետազոտություն, «Գրական թերթ», 1977, հուլիս 15

Ճէլալեան Վարդան, Վասպուրականի մանրանկարչությունը, «Ժամանակ», 1977, նոյեմբեր

Հարությունյան Վահան, Վասպուրականի ծաղկողները, «Սովետական Հայաստան», 1979, հունվար

Տոնապետյան Պատրիկ, Ֆրանսիական հանդեսը հայ արվեստի մասին, «Հայրենիքի ձայն», 1979, փետրվար

Ղազարյան Վիգեն, Վասպուրականի մանրանկարչությունը, «Հայրենիքի ձայն», 1979, մայիս

Bagattri Bellarmino, Miniature armene di Vas La Terra Santa, Israele, 1981

Ղազանչյան Ռաֆայել, Վասպուրականի մանրանկարչական դպրոցը, «Հայրենիքի ձայն», 1983, հունիս

Տեր-Մկրտչյան Լորետա, Արցախի հաւերժական արուեստը, «Սիոն», Երուսաղեմ, 1991, № 9-12

«Գրքերի աշխարհ» թերթի 1991 թ. հունվարի համարը հիմնականում նվիրված է Հրավարդ Հակոբյանին

Լաճիկյան Լևոն, Ղարաբաղի մշակույթի մասին գերմաներեն, «Ազգ», 1993, դեկտեմբեր

Կորխմազյան Էմմա, Խնամյալ ու մտացի հրատարակություն, «Հայաստանի Հանրապետություն», 1994, փետրվար

Դևրիկյան Վարդան, Նվիրված կերպարվեստի ուսուցմանը, «Հայաստան», 1997, հունվար

Գրիգորյան Վարդան, Արցախի կառավարության մրցանակը Հայաստանի գիտնականին, «Հայաստան», 1997, հուլիս

Դևրիկյան Վարդան, Արվեստագիտական ձեռնարկ, «Հայաստան», 1998, հունվար

Դոլուխանյան Աելիտա, Հայ կերպարվեստի ուսուցման առաջին հատորը, «Հայաստան», 1998, հունիս, N 65

Ալեքսանյան Նվարդ, Արցախի միջնադարյան մշակույթը, երեք լեզվով, «Արցախ», 1999, մարտ

Հակոբյան Հրավարդ Հրաչյայի, Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր 3, Երևան, 1999, էջ 53

Արցախի կիրառական արուեստը, «Արծիւ» - արուեստ, Ա տարի, 7 դեկտեմբերի, 2000, թիւ 163-164

Սարուխանյան Նորայր, Մարդն ընտրում է իր սեփական բարձունքը, «Հայաստանի Հանրապետություն», 2000, սեպտեմբեր

Մ. Ծ., Վաստակաշատ արվեստաբանը, «Ազդակ», Բեյրութ, 2001, հունվար

Կիրակոսյան Գեղամ, Բնագավառի ուսումնասիրման առաջնեկը, «Հայաստանի Հանրապետություն», 2003, հունվար

Ավետիսյան Ավետ, Հայոց Տերունական սրբապատկերները, «Քրիստոնյա Հայաստան», 2003, սեպտեմբեր

Դոլուխանյան Ելիտա, Հայոց Տերունական սրբապատկերների նոր մեկնաբանությունը, «Գրական թերթ», 2003, հունվար

Դոլուխանյան Ելիտա, Հայկական սրբապատկերներ, «Ազգ», 2004, փետրվար

Արշակյան Ա., Հայկական սրբապատկերներ, «Ազգ», 2004, փետրվար

Ղազարյան Վիգեն, Վասպուրականի մանրանկարչությունը, «Ազգ», 2004, մարտ

Գասպարյան Մհեր, Հայոց Տերունական սրբապատկերները, «Շողակն», 2004, նոյեմբեր

Багдасарян Мария. Маститый ученый, "Азг-наука", 2005, 29 ноября

Ղազարյան Վիգեն, Հոգևոր Հայաստանի քաղաքացին, «Կրթություն», 14 դեկտեմբերի, 2005

Դևրիկյան Վարդան, Զթուլացող եռանդով, «Էջմիածին», 2005, Թ, էջ 123-125

Ղազարյան Վիգեն, Հրավարդ Հակոբյան. գիտնականը և քաղաքացին, Հրավարդ Հակոբյան. Կենսամատենագիտություն, Երևան, 2005, էջ 3-9

Հակոբյան Հրավարդ Հրաչյայի, Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան (գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Այվազյան), 2 հատորով, հատոր առաջին. Աբալյան-Ղուշչյան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2005, էջ 355

Վարդանյան Կամո, Օրինակելի պատմություն սերունդների համար, «Կրթություն», 2006, հունվար

Գրիգորյան Վարդան, Հրավարդ Հակոբյան, Ավո Հովհաննիսյան, «Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը XVII-XVIII դդ., «Ազգ», 2007, ապրիլ

Սանթրյան Վանիկ, «Ադամանդակուռ Արարատ» շքանշան անվանի գիտնականին, «Հայաստանի Հանրապետություն», 2010, սեպտեմբեր

Ասրյան Սիլվա, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Հրավարդ Հակոբյանը 80 տարեկան է, «Մանկավարժական համալսարան», 2010, սեպտեմբեր

Դևրիկյան Վարդան, Զթուլացող եռանդով, «Ազգ», 2010, սեպտեմբեր

Հարությունյան Հասմիկ, «ԹՄՄ ադամանդակուռ Արարատ»-ը Հրավարդ Հակոբյանին, «Ազգ», 2010, սեպտեմբեր

Խմբագրական. Հրավարդ Հակոբյանին շնորհվեց Ազգային գրադարանի բարձրագույն պարգևը, «Հոգևոր հայրենիք», 2010, դեկտեմբեր

Микаелян К. Что же Господь ответил Фрику, "Новое время", 2012, февраль

Ղազարյաև Վիգեն, Հիմնարար աշխատություն, «Հայաստանի հանրապետություն», 2014, հունիս

Мелоян Сона. Неизвестное известное искусство, "Голос Армении", 17 июня, 2014

Ասրյան Սիլվա, ժամանակներն անհետանում են եթե չեն արտացոլվում արվեստի մեջ, («Սոցիալիզմը և հայ արվեստը» գրքի առթիվ), «Մանկավարժական համալսարան», 2014, հուլիս

Սանթրյան Վանիկ, Նախագահի շնորհավորանքը ծննդյան 85-ամյակի կապակցությամբ, «Հայաստանի Հանրապետություն», 2015, սեպտեմբեր

Հակոբյան Հրավարդ Հրաչյայի, Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, Երևան, 2015, էջ 549-550

Հակոբյան Հրավարդ Հրաչյայի, Հանրագիտական բառարան (գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Այվազյան), 2 հատորով, հատոր 2, Կինո-Ֆուքսին, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018, էջ 99

Հրավարդ Հրաչյայի Հակոբյան, Արմավիրի մարզի վաստակավոր գործիչները, Երևան, 2017, էջ 38-39

Աղասյան Արարատ, Ասատրյան Աննա, Հայ արվեստաբանության նվիրյալ մշակը. Հրավարդ Հակոբյանի ծննդյան 90-ամյակի առթիվ, «Հայաստանի Հանրապետություն», 2020, 12 սեպտեմբերի, շաբաթ, թիվ 153 (7365), էջ 4

Աղասյան Արարատ, Ասատրյան Աննա, Ճշմարիտ մարդը և գիտնականը (Հրավարդ Հակոբյանի ծննդյան 90-ամյակի առթիվ), Լրաբեր հասարակական գիտությունների, 2020, № 3:

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԵՎՈՐՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԱՍԻՆ

Հրավարդ Հակոբյանը 1960 թվականից Մատենադարանում է: Նա իր գիտական գործունեությունը սկսել է՝ ուսումնասիրելով պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիր մատյանների նկարչությունը՝ դրանց նվիրելով երեք մենագրություն և մեկ ալբոմ: Փաստորեն, առաջին անգամ արվեստագիտական շրջաններին ներկայացվեց մեր պատմական հայրենիքի մի հատվածի հարուստ արվեստը:

80-ական թվականներից, կապված արցախյան ազատագրական գաղափարների ու պայքարի հետ, Հր. Հակոբյանին հանձնարարվեց զբաղվել Արցախի միջնադարյան արվեստի հուշարձաններով: 1989-ին լույս տեսավ «Արցախ - Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ.», իսկ 1991-ին՝ «Արցախի միջնադարյան արվեստը», երկուսն էլ երեք լեզուներով: Այդ գրքերն իրենց պատմաարվեստագիտական ու աղբյուրագիտական բնույթով առաջիններից էին, որ որոշակի նպաստ բերեցին արցախյան պայքարի տեսական հիմնավորմանը: Վերջապես, Բեռլինում, 1993-ին լույս ընծայվեց կապիտալ մի հատոր՝ «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, մշակույթը...»: Այդտեղ Հրավարդ Հակոբյանի հետ համահեղինակ էին եվրոպացի մի քանի նշանավոր գիտնականներ: Եվրոպայում դա առաջին դեպքն էր, երբ Արցախի խնդիրը ներկայացվում էր համակողմանի և օբյեկտիվ կերպով, այն էլ գերմաներեն լեզվով: Այդ աշխատանքների համար Հր. Հակոբյանը 1996-ին արժանացավ Արցախի Հանրապետության Եղիշեի անվան պետական մրցանակին: 1984 թ. Լենինգրադում եվրոպական լեզուներով լույս ընծայվեց «Հայկական մանրանկարչությունը XIII-XIV դդ.» շքեղազարդ գիրքը (համահեղինակությամբ), 1987 թ. «Հայկական մանրանկարչությունը ըստ Մատենադարանի նյութերի»:

1988 թ. Հ. Հակոբյանը համատեղության կարգով հրավիրվում է Խ. Աբովյանի անվան Մանկավարժական համալսարան՝ նախ որպես ամբիոնի վարիչ, ապա, 2000 թ.՝ ամբիոնի պրոֆեսոր: Այստեղ էլ, հետամուտ ուսանող երիտասարդության արվեստագիտական իմացության և գեղագիտական դաստիարակության շնորհակալ գործին, Հր. Հակոբյանը լույս ընծայեց «Համաշխարհային և հայ արվեստի ուղեցույց ծրագիրը» (1993), «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (1996) և «Հայ արվեստի աշխարհում» (1998) գրքերը

Աշխատանքային բեղուն գործունեության հետ մեկտեղ Հր. Հակոբյանը հեռու չի մնացել հասարակական հանրօգուտ գործունեությունից: Երկար տարիներ նա «Հայաստան-Իտալիա» բարեկամական ընկերության փոխնախագահն

է, իսկ 2005 թ. լույս ընծայվեց նրա «Հայերը և Իտալիան» ուշագրավ գործը: Մինչ այդ, 2003-ին հրատարակվել էր Հր. Հակոբյանի «Հայոց Տերունական սրբապատկերները» կապիտալ աշխատությունը, որը լայն արձագանք գտավ հայ և արտասահմանյան հայագիտական շրջաններում: Ունի բազմաթիվ հոդվածներ հայկական և արտասահմանյան մամուլում:

2003 թ. նա արժանացել է Հանրապետության նախագահի շնորհագրին:

Հր. Հակոբյանը մի շարք ինստիտուտների գիտական մեծ խորհուրդների և կոչումներ շնորհող մասնագիտական խորհրդների անդամ է:

Սեն Արևշատյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրեն (1982-2007 թթ.)

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ ՄՇԱԿԸ

Լրանում են ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ծննդյան 90-ամյա և գիտաստեղծագործական գործունեության 60-ամյա հոբելյանները:

1959-ին Հ. Հակոբյանի գիտաստեղծագործական բեղմնավոր կյանքն անխզելիորեն կապվեց ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) հետ. նա 1966-ից Մատենադարանի գիտական խորհրդի անդամ է, 2016-ից՝ հոգաբարձուների խորհրդի անդամ, երկար տարիներ ղեկավարել է Մատենադարանի միջնադարյան արվեստի բաժինը:

Տասնամյակներ շարունակ միջնադարագետ-հայագետը զբաղվել է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիրմատյանների ուսումնասիրությամբ, որի հանրագումարը դարձան թեկնածուական («Վասպուրականի մանրանկարչության դպրոցի սկզբնավորումը և Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները», 1968) և դոկտորական («Վասպուրականի մանրանկարչությունը (XIII-XV դդ.)», 1985) ատենախոսությունները, «Վասպուրականի մանրանկարչությունը» երկհատոր աշխատությունը և «Миниатюра Васпуракана (XIII-XV вв.)» մենագրությունը, ինչպես նաև «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» ալբոմն ու գիտական բազմաթիվ հոդվածները: Հ. Հակոբյանի շնորհիվ առաջին անգամ ուսումնասիրվեց Վասպուրականի մանրանկարչությունն իր բոլոր դպրոցներով, գիտական շրջանառության մեջ դրվեցին մինչ այդ անհայտ տասնյակ տաղանդավոր մանրանկարիչների անուններ, բացահայտվեցին այդ դպրոցների ու դրանց առանձին ներկայացուցիչների ստեղծագործության ոճական և գեղարվեստական-պատկերագրական առաձնահատությունները:

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը Արցախի և Ուտիքի մանրանկարչության ուսումնասիրության գործում ևս: 1989-ին հրատարակված «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դարերում» եռալեզու գրքով արվեստաբանը հայկական մատենական նկարչության մեջ հաստատեց ինքնատիպ դպրոցի առկայության փաստը՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի քանի հազվագյուտ ձեռագրեր: Երկու տարի անց՝ 1991-ին լույս տեսավ «Արցախի միջնադարյան արվեստը» եռալեզու ուսումնասիրությունը: Ինչպես նկատել է ակադեմիկոս Սեն Արևշատյանը. «Այդ գրքերն իրենց պատմաարվեստագիտական ու աղբյուրագիտական բնույթով առաջիններից էին, որ որոշակի նպաստ բերեցին արցախյան պայքարի տեսական հիմնավորմանը»:

Ուշագրավ է, որ Բեռլինում, 1993-ին Գերմանիայի ավետարանական հոգևոր խորհրդի նախագահ, քահանա, մեծ հայասեր Մանֆրեդ Ռիխտերի և Հ.

Հակոբյանի ջանքերով հրատարակվեց «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը...» հիմնարար հատորը, որտեղ Հ. Հակոբյանի հետ համահեղինակներ էին եվրոպացի մի քանի նշանավոր դեմքեր: Եվրոպայում դա առաջին դեպքն էր, երբ Արցախի արվեստն ու քաղաքական խնդիրները ներկայացվում էին համակողմանի և օբյեկտիվ կերպով, այն էլ՝ գերմաներեն լեզվով:

Վերոհիշյալ գիտական աշխատությունների համար Հ. Հակոբյանը 1996-ին արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան ամենամյա մրցանակին:

2003-ին լույս տեսավ միջնադարագետի «Հայոց տերունական սրբապատկերները» աշխատությունը, որը ծանրակշիռ ներդրում դարձավ հայկական սրբապատկերի ուսումնասիրման բնագավառում: Նկատի ունենալով նյութի ծավալը՝ հեղինակն աշխատության մեջ քննության է առել միայն Հիսուս Քրիստոսի, Ս. Խաչի և Ս. Աստվածամոր պատկերները:

2007-ին լույս տեսավ Հ. Հակոբյանի (համահեղինակ՝ Ավո Հովհաննիսյան) «Նոր Ջուղայի խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքները 17-18-րդ դդ.» ուսումնասիրությունը, որտեղ, ինչպես նկատել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը. «Նոր Ջուղայի որմնանկարչական արվեստը դիտարկվում է նոր շրջանի արևմտաեվրոպական ու արևելյան ավանդական զարդարվեստի հետ տարված զուգահեռներում, ինչպես նաև կարևոր անդրադարձ է կատարում այն հարցին, թե Հին Ջուղայի և, ընդհանրապես, Նախիջևան աշխարհի մշակութային ավանդներն ինչպես շարունակվեցին Նոր Ջուղայում»:

Գիտական բեղմնավոր աշխատանքին զուգահեռ՝ Հ. Հակոբյանը զբաղվել է ակտիվ մանկավարժական գործունեությամբ ևս: 1989-ին Հ. Հակոբյանը համատեղության կարգով հրավիրվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, նախ՝ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000-ից՝ ամբիոնի պրոֆեսոր: Ուսանող երիտասարդության համար անվանի արվեստաբանը հրատարակեց «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց ծրագիրը» և իր բնագավառում աննախադեպ՝ «Կերպարվեստը հայոց կրթարաններում» արվեստի ուսուցման պատմության առաջին հատորը, որը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի գնահատմամբ՝ «հավակնում է նաև ազգային կերպարվեստի ուսուցման ճեռնարկի դեր կատարելու, և այս առումով նրա երևան գալը, իհարկե, երևույթ է, քանզի շեշտվում է իր նախորդը չունենալու իրողությունը»:

Զգալի է գիտական-մանկավարժի վաստակը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ արվեստաբանության և մանկավարժության գծով:

Ավիոկոնստրուկտոր Արտեմ Միկոյանը Մատենադարանում.
ձախից աջ՝ Ս. Լալաֆարյան, Ա. Փիրուզյան, Ա. Միկոյան, Ս. Արևշատյան,
Լ. Խաչիկյան, Էդ. Բաղդասարյան, Շ. Սմբատյան, Է. Դեմուրյան, Հր. Հակոբյան

Սարդարապատի հուշահամալիրում, ձախից աջ՝ Հր. Հակոբյան,
Ս. Տեր-Ներսեսյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ջեյթունյան

Արգենտինացի երգչուհի Լոլիտա Տորեսը Մատենադարանի կոլեկտիվի հետ

Ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու հետ, Վենետիկ, 1977 թ.

Պրոֆեսոր Աս. Մնացականյանի հետ, Երևան, 1971 թ.

Հր. Հակոբյանը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վ. Ղազարյանի հետ

Ս. Ղազար կղզում, ձախից աջ՝ հայր Հովհաննես,
նկարիչ Կ. Եղիազարյան, Հր. Հակոբյան,
Մխիթարյան միաբանության աբբահայր Պողոս Անանյան,
Ներսես եպիսկոպոս Տեր-Ներսեսյան

Ակադեմիկոս Բ. Առաքելյանի հետ,
Վենետիկի Սբ. Մարկոսի հրապարակում, 1981 թ.

Ակադեմիկոս Ռ. Ջարյանի,
Մ. Ղազարյանի, Ռ. Խաչատրյանի,
Է. Կորխմազյանի հետ, Վենետիկ, 1977 թ.

Ֆրանսիացի նշանավոր գիտնականներ Մ. և Ն. Թիերիները՝
Հր. Հակոբյանի ընտանիքում,1985 թ.

Հայագետ Արբակ Մխիթարյանը և կինը՝ Հր. Հակոբյանի ընտանիքում

Գերմանացի հայագետ Թեսսա Հոֆմանի հետ Շուշիում, 2012 թ.

Ակադեմիկոս Լևոն Ջեբեյանը
Հր. Հակոբյանի ընտանիքում, 1982 թ.

Սորբոնի համալսարանի մուտքի մոտ.
ձախից աջ՝ Անի Մահե, ակադեմիկոս Ժան Պիեռ Մահե,
Հր. Հակոբյան, Վ. Բասմաճյան, Փարիզ, 2003 թ.

Սորբոնի համալսարանում.
Ա. Գևորգյան, Ն. Ղարիբյան, Ա. Մութաֆյան,
էդ. Վարդանյան, Հր. Հակոբյան, Փարիզ, 2003 թ.

Ն. եպիսկոպոս Տեր-Ներսեսյանի և հայր Կոմիտասի հետ,
Վենետիկ, 1972 թ.

Մուրադ Հասրաթյանի և Արարատ Աղասյանի հետ,
Երևան, 2016 թ.

Արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի անդամները

Գեղանկարիչներ Գ. Աղայանը և Ա. Գրիգորյանը
Հր. Հակոբյանի տանը

Ձախից աջ՝ Բ. Վարդանյան, Հր. Հակոբյան,
Վ. Բարխուդարյան, Ա. Շեկունց, Մ. Հասրաթյան,
Լ. Ջեբեյան, Յ. Յուզբաշյան, Սևան

Ձախից աջ՝ Ար. Շեկունց, ակադեմիկոս Ս. Արևշատյան,
կինը՝ բանասեր Ք. Դավթյան,
Հր. Հակոբյան, Վ. Բարխուդարյան, Սևան, 2005 թ.

Ձախից աջ՝ Լ. Ջեբեյան, Հր. Հակոբյան, Ս. Գևորգյան,
Լ. Արզումանյան, Սևան,2005 թ.

Հայաստանում Ուկրաինայի դեսպան Օ. Բոժկոն Մատենադարանում.
Ձախից աջ՝ Հր. Թամրազյան,
Ուկրաինայի դեսպանատան աշխատակից, Օ. Բոժկո,
Վ. Գրիգորյան, Ա. Գրիգորյան, Հր. Հակոբյան, 2014 թ.

Քանդակագործ Ղուկաս Զուբարյանի և
գեղանկարիչ Գրիգոր Աղասյանի հետ, 2002 թ.

Հր. Հակոբյանը «Հայագիտական միջազգային ընկերության»
հիմնադիր-նախագահ Մայքլ Սթոունի
և որդու՝ Արայի հետ

Կոմպոզիտոր Եր. Երկանյան, Հր. Հակոբյան

Ձախից աջ՝ Վահան Տեր-Ղևոնդյան, Հր. Հակոբյան,
Կարեն Մաթևոսյան, Վահե Թորոսյան

Մատենադարանի կոլեկտիվի հետ

Պրոֆեսոր Ռ. Միրզախանյանը ադամանդակուռ «Արարատ» շքանշանը հանձնում է Հր. Հակոբյանին

Հր. Հակոբյան, Ա. Դոլուխանյան

Հրավարդ Հակոբյան
Փ. Թերլեմեզյանի անվան գեղ. ուսումնարանի ուսանող,
հեղ.՝ Արվեստի վաստակավոր գործիչ Վահրամ Գայֆեճյան, 1951 թ.

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պատանի կոնստրուկտորը, 1952 թ.

Ուսանողուհի Լարիսա Հակոբյանի դիմաքանդակը, 1951 թ.

Կնոջ՝ Էսմա Ավետիսյանի դիմանկարը, 1980 թ.

Ավագ որդու՝ Հրաչիկի դիմանկարը, 1979 թ.

Կրտսեր որդու՝ Արայի դիմանկարը, 1984 թ.

Հր. Հակոբյանի հրատարակած աշխատությունները

ՀԱՅ
ԱՐՎԵՍՏԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՏԻՐԱԼԱՆԱՆ
ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸՐ
ARMENIAN LORD'S ICONS
ИКОННЫЕ ОБРАЗЫ ХРИСТА И БОГОМАТЕРИ
В АРМЯНСКОМ ИСКУССТВЕ


ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԲԱՐ ԱԿՈՊԻՆ • ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐԻՆ
АРМЯНСКАЯ
МИНИАТЮРА
HRAVARD HAKOBYAN • VIGEN GHAZARYAN
ARMENIAN
MINIATURE PAINTING

Հրավարդ Հակոբյանը՝ թոռների՝ Հրաչիկ, Արփի,
Արեգ, Անժելիկա, Դավիթ, 2009 թ.

Գիտամանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ Հ. Հակոբյանը զբաղվել է նաև հասարակական ակտիվ գործունեությամբ: 1990-ից Հ. Հակոբյանն Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական կոմիտեի «Հայաստան-Իտալիա» ընկերության փոխնախագահն է: Նրա գործունեության արդյունքներից մեկը դարձավ «Հայերը և Իտալիան» գիրքը (1999, 2005), որտեղ լուսաբանվել են հայ-իտալական գեղարվեստական հարուստ ու հարյուրամյակների պատմություն ունեցող առնչությունները: 2005-ին նա ընտրվել է Հումանիզմի խնդիրների ակադեմիայի իսկական անդամ:

Հ. Հակոբյանի արվեստագիտական գործունեության կարևոր էջերից է համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ, որը սկիզբ է առել տասնամյակների հեռվից: Նա իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած՝ հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների աշխատանքներին: Նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի հրավիրված անդամ է 2003-ից, իր ստեղծման օրից՝ 1996-ից ի վեր, ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման, արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի անդամ է:

Ուշադրության է արժանի Հ. Հակոբյանի գիտական համագործակցությունը Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի հետ: Նրանց համահեղինակությամբ 2012-ին հրատարակված «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» աշխատության մեջ լուսաբանվեց հայ միջնադարյան կերպարվեստի պատմական ուղին: Նրանց համահեղինակությամբ 2019-ին հրատարակվեց «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումը և զարգացման ընթացքը» մենագրությունը, և առաջին անգամ մի ամբողջ ստվարածավալ հատոր նվիրվեց հայ միջնադարյան արվեստի թերևս ամենահարուստ բնագավառի՝ հայկական մանրանկարչության պատմությանը:

Իսկ դրանից տարիներ առաջ՝ 2009-ին, լույս էր տեսել Արարատ Աղասյանի, Հրավարդ Հակոբյանի, Մուրադ Հասրաթյանի և Վիգեն Ղազարյանի «Հայ արվեստի պատմություն» աշխատությունը, որի համար հեղինակները ՀՀ նախագահի 2009 թ. դեկտեմբերի 29-ի հրամանագրով արժանացան 2009 թվականի Հայաստանի Հանրապետության պետական մրցանակին՝ կերպարվեստի ոլորտում:

Արարատ Աղասյան
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՁԹՈՒԼԱՑՈՂ ԵՌԱՆԴՈՎ

Լրացավ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մաշտոցի անվան Մատենադարանի բազմաշխատ և վաստակավոր գիտնականներից Հրավարդ Հրաչյայի Հակոբյանի ծննդյան 90-ամյակը: Այս իննսուն տարիներից շուրջ վեց տասնյակը կապված է հայ արվեստի և հայագիտության հետ:

Ծնվել է 1930 թվականի սեպտեմբերի 13-ին Էջմիածին քաղաքում: 1949 թ. ավարտելով Հոկտեմբերյան քաղաքի (այժմ՝ Արմավիր) թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1949-1952 թթ. սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի քանդակագործության բաժնում, 1953-1958 թթ.՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Շնորհիվ ուսումնառության այս երկու միմյանց հաջորդող շրջանների, ինչպես գրում է արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանը, «Նա ձեռք է բերել արվեստագետի համար կարևոր երկու հմտություն՝ նկարչի աչք և աղբյուրագետի պրպտող միտք»:

Մատենադարանի երջանկահիշատակ տնօրեն Լևոն Խաչիկյանի հրավերով 1959 թ. գալիս է հայ ձեռագրային աշխարհի խոշորագույն այս օջախը և իր հետագա ողջ կյանքը կապում Մատենադարանի հետ:

1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչական դպրոցի սկզբնավորումը և Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները» թեմայով, ստանալով արվեստագիտության թեկնածուի աստիճան:

1985 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչությունը (XII-XVդդ.)» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

1989 թ. համատեղության կարգով հրավիրվում է նաև Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, նախ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000 թվականից՝ ամբիոնի պրոֆեսոր:

Անցնող այդ տասնամյակները Հ. Հակոբյանի կյանքում նշանավորվել են գիտատամանկավարժական և հասարակական հարուստ և արդյունաշատ գործունեությամբ: Նա հեղինակ է շուրջ երկու տասնյակ աշխատությունների: Գիտնականի հետազոտությունների շրջանակում առանձնակի տեղ է գրավում Վասպուրականի արվեստը, որին է նվիրված նրա երկհատոր «Վասպուրականի մանրանկարչությունը» (հտ. Ա, Երևան, 1976 թ., հտ. Բ, 1982 թ.) գործը, ինչպես նաև «Հայկական մանրանկարչություն» շարքի Վասպուրականին նվիրված մեծադիր ալբոմը (Երևան, 1978 թ.), որը 1989 թ. հրատարակվեց նաև ռուսերեն: Անհրաժեշտ է նշել, որ Հ. Հակոբյանի համահեղինակությամբ են լույս տեսել նաև «Հայկական մանրանկարչություն» (Լենինգրադ, 1984 թ.) անգլերեն և «Հայկական մանրանկարչություն» (Երևան, 1987 թ.) ռուսերեն ալբոմները:

Վասպուրականի մանրանկարչությանը նվիրված իր ուսումնասիրությամբ Հ. Հակոբյանը վեր հանեց Հայոց պատմական այս մեծ նահանգի տարբեր գավառներում գտնվող վանական գրչօջախների մանրանկարչական արվեստի մեջ եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Գիտական հետազոտություններն ազգային հիմնախնդիրների պաշտպանությանը ծառայեցնելու բնորոշ օրինակ է գիտնականի «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը» (Երևան, 1989 թ.) ուսումնասիրությունը, որին 1991 թ. հաջորդեց «Արցախի միջնադարյան արվեստը» գործը:

Ընդլայնելով Արցախի արվեստի ուսումնասիրության շրջանակը և գիտության միջոցով Արցախի դատին իր մասնակցությունը բերելու նպատակադրմամբ, 1993 թ. նա, Բեռլինում, Գերմանիայի Ավետարանական եկեղեցու նախագահ Մանֆրեդ Ռիխտերի աջակցությամբ, հրատարակում է «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը» հիմնարար հատորը՝ աշխատակցությամբ եվրոպացի հայագետ հեղինակավոր գիտնականների: Այս գրքում համակողմանիորեն ներկայացված է ոչ միայն Արցախի արվեստը, այլև արցախյան հիմնախնդիրը:

Այս գործի համար 1996 թ. Հ. Հակոբյանն արժանանում է ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակին:

Առանձին մի խումբ են կազմում հոբելյարի՝ արվեստի պատմությանը և տեսությանը նվիրված այն գործերը, որոնք գրված են արվեստագիտության դասավանդման և ուսուցման մեթոդիկայի տեսանկյունից:

Այս շարքի առաջին աշխատանքն էր «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (Երևան, 1996 թ.) ուսումնասիրությունը, որը եկավ լրացնելու հայ կերպարվեստի ուսուցման պատմության, դրվածքի ու մեթոդական եղանակների մասին մեզանում եղած բացը:

Ուսումնական նույն թելադրանքով են գրված նաև «Ջեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» (Երևան, 1997 թ.), «Հայ արվեստի աշխարհում» (Երևան, 1998 թ.), «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց» (1-ին հրատարակությունը՝ Երևան, 1999 թ., երկրորդը՝ 2005 թ.) աշխատանքները:

Գիտական հետազոտությունների հաջորդ ուղղությունը, որով զբաղվում է Հ. Հակոբյանը, հայ գաղթավայրերի արվեստն է: Բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել Իտալիայի հայ համայնքի մասին: Իտալահայ համայնքի պատմությունը նա դիտարկում է Իտալիայում հայ արվեստի պատմության տեսանկյունից «Հայերը և Իտալիան» գրքում:

Նույն այս շրջանակում Ավո Հովհաննիսյանի հետ համատեղ հրատարակել է «Նոր Ջուղայի խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքները 17-18-րդ դդ.» (Երևան, 2007 թ.) ուսումնասիրությունը, ուր Նոր Ջուղայի որմնանկարչական արվեստը դիտարկում է նոր շրջանի արևմտաեվրոպական ու արևելյան ավանդական զարդարվեստի հետ տարված զուգահեռներում,

ինչպես նաև կարևոր անդրադարձ է կատարում այն հարցին, թե Հին Ջուղայի, և ընդհանրապես Նախիջևան աշխարհի մշակութային ավանդներն ինչպես շարունակվեցին Նոր Ջուղայում:

Հայոց եկեղեցում պատկերների պաշտամունքի հարցին է նվիրված «Հայոց Տերունական սրբապատկերները» (Երևան, 2003 թ.) հիմնարար աշխատությունը: Մեր եկեղեցին պատկերապաշտության և պատկերամարտության նշանավոր վեճերի շրջանում միջանկյալ դիրք է գրավել, որը հայտնի է «պատկերահարգություն» անվամբ, ըստ որի, պաշտվել է ոչ թե պատկերը (իկոնան), այլ նրա պարունակած հոգևոր խորհուրդը: Ահա այս պատճառով Հայոց եկեղեցին դասական իմաստով սրբապատկերներ չունի: Հ. Հակոբյանը սակայն, մատենագրական աղբյուրների նրբին քննությամբ ցույց է տալիս, թե սրբապատկերը որպես հոգևոր ծիսապաշտամունքային երևույթ, ինչ արտահայտություններ է ունեցել Հայոց եկեղեցում՝ այս շրջագծում քննելով նաև թե՛ տարբեր սրբանկարներ և թե՛ ժողովրդային պաշտամունքի առարկա դարձած ձեռագիր Ավետարանների Տերունական պատկերները և մետաղյա կազմերը:

2009 թ. Հր. Հակոբյանն իր անվանի գործընկերներ Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի և Վիգեն Ղազարյանի համահեղինակցությամբ հրատարակեց «Հայ արվեստի պատմության» իրապես կապիտալ հատորը, ուր ներկայացվում և լուսաբանվում է հայ կերպարվեստի և ճարտարապետության անցած պատմական ուղին հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: «Զանգակ-97» հրատարակչության լույս ընծայած այս գործին, որն աննախադեպ է թե՛ նյութի ընդգրկմամբ և թե՛ զետեղված նկարների թվով և բարձրարվեստ տպագրությամբ ու ձևավորմամբ, արժանիորեն շնորհվեց ՀՀ պետական մրցանակ:

Հ. Հակոբյանը մի քանի գիտական հաստատությունների և գիտական խորհուրդների ու գիտական կոչումներ շնորհող հանձնաժողովների անդամ է: Իր ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդ արվեստագետներ, պաշտպանելով իրենց թեկնածուական ատենախոսությունները, իրենց անձնագիրն են ստացել գիտության աշխարհում:

Ի գնահատություն գիտահասարակական այս գործունեության, Հրավարդ Հակոբյանը 2003 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրին, իսկ 2005 թվականին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատվոգրին և ապա՝ ՀՀ նախագահի հրամանագրով՝ ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, իսկ 2006 թվականին՝ ՀՀ նախագահի շնորհակալագրին: Նա նաև ՀՀ մշակույթի նախարարության, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի և Արցախի պետական համալսարանների ոսկե մեդալակիր է:

Այսօր ևս Հ. Հակոբյանն աշխատում է նույն եռանդով՝ մեկը մյուսի հետևից ամբողջացնելով իր նոր ուսումնասիրությունները:

Պատկառելի տարիքի հասած գիտնականը վերջին տարիներին արվեստասերների սեղանին դրեց մի քանի մեծարժեք գրքեր: 2015-ին «Արցախի մանրանկարչության արվեստը» շքեղ պատկերագիրքն ամբողջական պատկերացում է տալիս հայոց հինավուրց գավառի հարուստ և ինքնատիպ գրքարվեստի մասին:

2017 թվականին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի հետ Մոսկվայում հրատարակեց «Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը» մեծածավալ հատորը: Այն լայն արձագանք գտավ թե՛ եվրոպական և թե՛ ամերիկյան արվեստագիտական շրջաններում: Հեղինակներին հաջողվել է ցույց տալ, որ սոցիալիստական ռեալիզմը այն ուղղությունն է, որն ըստ ամենայնի արտահայտեց վերածնունդ ապրող երիտասարդ հանրապետության գեղարվեստական մշակույթի բարձր արժեքները: Այդ երանելի ժամանակներում են ստեղծագործել հայ կերպարվեստի մեծերից շատերը. Մարտիրոս Սարյան, Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Էդուարդ Իսաբեկյան, Սեդրակ Առաքելյան, Արա Սարգսյան, Մինաս Ավետիսյան և այլք:

Ընդամենը մեկ տարի առաջ՝ 2019-ի վերջում, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի համահեղինակությամբ լույս ընծայվեց «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումն ու զարգացման ընթացքը» ստվարածավալ մեծաշուք հատորը: Դա առաջին դեպքն էր, երբ հայկական մատենական արվեստը ներկայացվում է ամբողջական ընդգրկմամբ՝ դպրոցներով ու խոշոր կենտրոններով հանդերձ:

Նույն թվականին իր երիտասարդ գործընկերոջ՝ Սուսաննա Ջանիկյանի մասնակցությամբ հրատարակում են «Հայկական մանրանկարչություն. ուսումնամեթոդական ընույթի ձեռագրեր և ժողովրդական ավանդական մոտեցումը» տեսական ընույթի ուշագրավ աշխատությունը:

Այժմ նաև գրության փուլում է «Դրվագներ ուշ միջնադարյան հայկական մանրանկարչության պատմությունից (XVI դ. երկրորդ կես - XVII դ.)» ուսումնասիրությունը, որը ներառում է թե՛ հայկական բնաշխարհը և թե՛ հայ գաղթավայրերը:

Ուստի մաղթենք, որ անցնող ամիսներն ու տարիները այսուհետև ևս նորանոր գործերով հավելեն նրա աշխատությունների ցանկը, և Հրավարդ Հակոբյանը, շարունակելով նույն նվիրումով աշխատել, ոչ միայն իր հարուստ գիտաստեղծագործական փորձը փոխանցի իր կրտսեր գործընկերներին, այլև նրանց համար շարունակի մնալ գիտնականի և հասարակական մտահոգություններով ապրող մտավորականի կենդանի օրինակ:

Վարդան Դևրիկյան
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի տնօրեն, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Ընթերցողներին, հայ արվեստը ուսումնասիրողներին է հանձնվել Հրավարդ Հակոբյանի «Կերպարվեստը հայոց կրթարաններում» աշխատության առաջին գիրքը: «Հեղինակի կողմից» խորագրված նախաբանից իմանում ենք, որ ուսումնասիրությունը լինելու է եռահատոր՝ երկրորդ գիրքը նվիրված է լինելու 17-19-րդ դարերին, իսկ երրորդը՝ 20-րդ դարի դպրոցի ու մանկավարժության գործունեության մեջ նկարչություն առարկայի դերին ու դրվածքին:

Նկատենք, որ Հրավարդ Հակոբյանը միջնադարյան կերպարվեստի լավագույն գիտակներից է մեզանում և ունի բեղուն գրիչ՝ դրա առհավատչյան նրա բազմաթիվ գրքերն ու հոդվածներն են՝ նվիրված հայ մանրանկարչության տարբեր դպրոցներին: Այս պարագան կարևոր է այնքանով, որ հայ կերպարվեստի մասին գրում է այն խորքով իմացող մասնագետը: Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ հեղինակը գիրքը գրել և հրատարակել է այն ժամանակ, երբ միջնադարի մասին գրելիս պարտադիր չէ այն հարմարեցնել խորհրդային գաղափարախոսության հետ, որի հետևանքով արհեստականորեն աթեիստներ էին դառնում միջնադարի մի շարք նշանավոր գրողներ, որոնց մտածողական համակարգում աթեիզմն ընդհանրապես գոյություն չուներ:

Հրավարդ Հակոբյանի գիրքը հավակնում է նաև ազգային կերպարվեստի ուսուցման ձեռնարկի դեր կատարելու, և այս առումով նրա երևան գալը, իհարկե, երևույթ է, քանզի չեշտվում է իր նախորդը չունենալու իրողությանը: Գրքի առաջին հատորը ժամանակային առումով բաժանված է երեք գլուխների՝ «Ուրարտուի կամ Արարատյան թագավորության շրջան», «Հելլենիստական շրջան» և վերջին գլուխը՝ «Միջնադար»:

Գրքի հեղինակը հայտնի փաստերի ծաղկաքաղը կատարելիս ցուցաբերել է անհատական մոտեցում և կատարել որոշ շահեկան ճշգրտումներ, որոնց հետևանքով ձեռնարկը մեծապես շահել է: Այս հատվածում ուրարտական-հայկական արվեստին զուգորդվում են շումերական, ասորաբաբելական, եգիպտական կերպարվեստները՝ համապատասխան դիցաբանական հիմունքներով: Այս առումով դիտարկվել են այդ հնագույն մշակույթների միջոցով մեզ հասած կերպարվեստի ասացման հարցերին վերաբերող եզակի հիշատակումները, որոնցից իմանում ենք, որ հնագույն ժամանակներում արդեն կերպարվեստի ուսուցում առարկան մտցված էր դպրոցական ծրագրերում: Ճշտորեն են նկատված դպրոց-կրոն-դիցաբանություն փոխկապերը:

Գրքի երկրորդ գլխում բնութագրվում է հելլենիզմի երևույթը՝ կապված Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետ և Հայաստանի հելլենիստական կրթամշակութային ոլորտի մեջ մտնելը և նրանում երկար մնալը՝ մինչև քրիստոնեության մուտքը:

Հելլենիզմի բարձրակետը Հայաստանում Տիգրան Մեծի գահակալության ժամանակաշրջանն էր, որի մասին հայ և օտար աղբյուրները թողել են արժեքավոր փաստեր: Առանձնացված ներկայացված է հին աշխարհի նշանավոր դեմքերից մեկը՝ Պարույր Հայկազնը, նշվում են նաև հայ հեթանոս աստվածները իրենց հունական զուգահեռներով: Գրքի 37-րդ էջի տողատակում Հրավարդ Հակոբյանը ունի մի կարևոր նկատում. «Հավանաբար հելլենիստական շրջանից շատ հուշարձաններ կարող էին հայտնաբերվել պատմական Հայաստանում՝ Բարձր Հայք, Տարոն, Երզնկա, Մոկս, Վասպուրական, Սասուն և այլուր, եթե դրանք Թուրքիայի տարածքում չգտնվեին և հնարավոր լիներ կատարելու հնագիտական պեղումներ»:

Բնականաբար, ծավալուն է գրքի այն հատվածը, որ վերաբերում է հայ միջնադարին, այդ ժամանակահատվածը առավել փաստահարուստ է և պահպանված արժեքները, մեզանում եղած կրթօջախներն ու համալսարանները հնարավորություն են տալիս առավել փաստական ձևով ներկայացնել հայ կերպարվեստի ուսուցման համակարգը:

Հրավարդ Հակոբյանը հայկական կերպարվեստի պատմությունը շարադրելիս զուգահեռներ է անցկացնում հունական, բյուզանդական և հատկապես իտալական կերպարվեստի հետ: Նա խոսում է այն նշանավոր կառույցների մասին, որոնք ամբողջական կամ ավերված հասել են մինչև մեր օրերը: Ճարտարապետական հուշարձաններից ընտրագրվում են հատկապես Աղթամար կղզու վանքերը, որոնք արժանացել են միջազգային ճանաչման՝ իրենց կատարելության շնորհիվ:

Հայ ճարտարապետության նվաճումները թվարկվում են դար առ դար՝ ներկայացնելով նրանց արժեքը ն արվեստի միտումները: Առանձնացված ներկայացվում են Գլաձորի և Տաթևի համալսարաններում կերպարվեստի առարկայի դրվածքը և դրա շնորհիվ մեզ հասած մշակութային արժեքները:

Անիի մշակույթն իրավացիորեն դիտվում է որպես հայ կերպարվեստի առանձին նվաճում: Հեղինակը փորձում է հիմնավորել, որ Գլաձորի համալսարանը եղել է առաջնակարգ բարձրագույն կրթօջախ՝ իր ժամանակի առումով Լ առավել վաղ է հիմնադրվել, քան Պրահայի, Փարիզի և Քեմբրիջի համալսարանները: Գրքի էջերում երևում են հայ կերպարվեստի այնպիսի երևելի դեմքեր, ինչպիսիք են՝ Մանվել ճատարապետը, Մոմիկը, Թորոս Ռոսլինը և ուրիշներ:

Հետազոտողը ծանրանում է նաև Տաթևի համալսարանի՝ հատկապես 14-15-րդ դարերի գործունեության վրա, երբ հատուկ ծրագրերով պատրաստվում էին հմուտ գրիչներ ու ծաղկողներ: Գրչության ու մանրանկարչության գործը Գրիգոր Տաթևացուց հետո մեծ եռանդով շարունակել է Թովմա Մեծոփեցին, որի դպրոցում սովորող աշակերտները վարժեցվում էին իրենց ընդօրինակած ձեռագրերը գեղեցիկ պատկերներով զարդարելու արվեստին:

Հրավարդ Հակոբյանը խոսում է Հովհաննես Սարկավագի արվեստի տեսության մասին և իրավացիորեն ներկայացնում, որ չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, հայերը շարունակում էին իրենց հոգևոր կյանքի վերելքը. զարգացման մակարդակով գերազանցելով իրենց պետականությունից զրկված այլազավան պետությունների կրթամշակութային ընդհանուր մակարդակին:

Խոսելով կերպարվեստի մասին՝ հեղինակը անցնում է նաև գրականությանը: Հիշատակելով Գրիգոր Նարեկացու տաղերգության շրջադարձային դերը, բնորոշում է Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների նորարարությունը, հատկապես առանձնացնում Կոստանդին Երզնկացու սիրերգությունը և արեգակին, լուսին, բնության զարթոնքին նվիրված սքանչելի տաղերը, որոնք բացառիկ արժեքներ են՝ ըստ Վալերի Բրյուսովի: Գրքի այս հատվածներում Հ. Հակոբյանը անդրադառնում է հայ գրականության և արվեստի մեջ եղած վերածննդի խնդիրներին՝ իր տեսակետներով ճայնակցելով Վ. Զալոյանի «Հայկական ռենեսանս» աշխատության դրույթներին:

Այս կարևոր գրքի մեջ կարելի է կատարել որոշ լրացումներ: Օրինակ, երբ հայ հեթանոսական աստվածները համեմատվում են հունականին, ճիշտ կլիներ նաև համեմատել զրադաշտական կրոնի աստվածներին, որովհետև նրանցում ավելի շատ են համընկնումները: Հեղինակը բարեխղճորեն նշում է իր օգտագործած աղբյուրների մեծ մասը տողատակում, սակայն չեն նշվում նաև որոշ աղբյուրներ, որոնց հիշատակումը օգտակար կլիներ մասնագետների համար: Կ. Մարքսի հայտնի ասույթը հունական արվեստի և դիցաբանության կապի մասին, եթե օգտագործվել է, ապա արժե հիշել Մարքսին, թե չէ միամիտ ընթերցողը կարող է այդ դրույթը վերագրել հեղինակին: Ցավալի է, բայց փաստ, գրքում տեղ են գտել բավականին տեխնիկական թերություններ, որոնց հետևանքով աղավաղվել են հայտնի անուններ, փոփոխվել հայտնի թվականներ: Այս դիտողություններն արվում են միայն մի ցանկությամբ. «Կերպարվեստը հայոց կրթարաններում» գրքի երկրորդ և երրորդ հատորները, որոնք սպասված են ընթերցողների ու մասնագետների համար, լինեն ավելի անթերի:

Աելիտա Դոլուխանյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«Հայաստան», հունիս, 1998, N 65

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲԵԱՆԻ
ՀԱՅՈՑ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ
ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Երբ ձեռք կ՚առնեն ինծի հասցեագրուած Հրավարդ Յակոբեանի հերթական նոր գիրքը, անխառն յուզում կը պատէ զիս: Տարիներէ ի վեր առիթը ունեցած եմ մօտէն ճանաչնալու եւ հիանալու իր գիտական բացառիկ նուաճումներուն եւ իր ամբողջական նուիրումին՝ հանդէպ հայ մանրանկարչութեան եւ հայ արուեստին: Ահաւասիկ վերջերս լոյսին եկած «Հայոց Տէրունական Սրբապատկերները» խորագրեալ հատորը որուն ընդդմէջէն միջնադարեան հայ գեղարուեստը մեզի կը ներկայանայ գիտական համակողմանի եւ խորազննին վերլուծութեամբ. հայոց սրբապատկերներուն տալու պատմագիտական արժէք եւ ճանաչողութիւն, որ զգալի բացակայութիւն մըն էր հայ կրօնա-եկեղեցական արուեստի վերծանման բնագաւառին մէջ: Եզակի այս ուսումնասիրութիւնը անգամ մը եւս կը հաստատէ, թէ յանձինս Հրավարդ Յակոբեանի ունինք միջնադարեան հայ արուեստի բանիրուն գիտնական մը, որուն վերոյիշեալ ուսումնասիրութիւնը արժանի է բարձրագոյն գնահատանքի:

Յարգանքներով՝ դոկտ. Զաւէն Եկաւեան,
տնօրէն Գալուստ Կիւլպէնկեան
հիմնարկի հայկական բաժանմունքի
Լիսաբոն, 2004

ԱՐՑԱԽԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Հայերեն արուեստաբանութեան ամենայայտնի դէմքերէն մէկն է Հրաւարդ Յակոբեան: Հայ միջնադարեան արուեստի պատմութեան մէջ անոր ներդրած վաստակը պատկառելի է եւ անուրանալի: Վկայ իր հրատարակած շարք մը հատորները, որոնք կը քննարկեն ու կը մեկնաբանեն հայ միջնադարեան արուեստի տարբեր երեսները: Անոր հեղինակած ջիրքերու շարքին է ինեւ «Արցախի Միջնադարեան Արուեստը» հատորիկը, ուրկէ ստորեւ կ'արտատպենք Արցախի կիրառական արուեստին վերաբերող հատուածը:

Ուրոյն մի խումբ են կազմում Արցախի վարպետների ձեռքով պատրաստուած խաչքարերը, որոնք հայկական արուեստի թերեւս ամենաինքնատիպ արտայայտութիւնն են: «Ինձ յաջողուել կ տեսնեք,- գրում է Գ. Անոխինը, այցելելով Դադի վանք եւ տեսնելով Աթանաս վանահօր կողմից 1283 թ. կանգնեցուած խնչքարերը,- սակայն թերեւս այս երկուսին իրենց ժանեակների կատարման աներեւակայելի նրբութեամբ ու բազմազանութեամբ հաւասարը չկայ»:

Մի քանի ընտիր խաչքարեր կապուած են իշխան Հասան Ջալալի և նրա կնոջ՝ Արպուխաթունի անուան հետ: Յայտնի են Հաւապտուկ վանքի Խաղբակեանների տոհմական գերեզմանատան խաչքարերը. Խաթրավանքում Դոփեան Գրիգոր իշխանի կնոջ Սոփիայի կանգնեցրած խաչքարը: Միայն Կօչիկ անապատում պահպանուել են մէկ ու կէս տասնեակից աւելի խաչքար՝ ռազմիկների պատկերներով: Եւ ինչն է հետաքրքրական, որոշակի նմանութեան սահմաններում հազարաւոր խաչքարերից իւրաքանչիւրը ձեւայօրինման իր ուրոյն բնոյթն ունի, նախշայարդերի բնորոշ կագը: Դրանց հեղինակների երեւակայութիւնը, յիրաւի, սահմանները չի ճանաչել, սակայն բոլոր դէպքերում արտայայտուել է ազգային նուիրական մի գաղափար: Դիպուկ է նկատել էդուարդաս Մեժելայտիսը. «Խաչքարը Հայկական այդ ֆենոմենը, խորհրդանշում է այն տառապանքները ուրոյնը, զոհերը, որ դաժան պատմութիւնը պահանջել է այս փոքրիկ, հինաւուրց ժողովրդից: Իսկ ամբողջ քարը պարունակող բուսական նախշազարդերը ցոյց են տալիս այդ ժողովրդի կենսական ուժը, որի դէմ անզօր են եղել դաժանութիւնը, մահը, ցեղասպանութիւնը»:

Առանձնայատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում այն խաչքարերը, որոնց ժանեակահիւս զարդերի մէջ պատկերուած են աշխարհիկ մոթիւներ, մեկենասների պատկերներ, զինուորական տեսարաններ: Դերանք կարեւոր նիւթեր են տալիս միջնադարեան Հայաստանի կեանքի ու պայքարի ուսումնասիրութեան համար: Ի դէպ, ակադեմիկոս Հ. Օրբելին նկատում է, որ դրանք շատ դէպքերում եղել են յուշարձաններ եւ ոչ սոսկ մահարձաններ. «Մարդկանց պատկերներ ունեցող խաչքարերը,- գրում է մեծանուն գիտնականը,– առաջին

անգամ յայտնաբերուեցին Հայաստանի այն մասում, մասնաւորապէս խաչենում, ուր նման քանդակապատկերներն ու զարդերը նախասիրուած ձեւ են եղել»:

Խաչքարերի հետ օրկանապէս կապուած են Արցախ-Ուտիքի միջնադարեան տապանաքարերը: Գարեգին Յովսէփեանը մի առիթով մէջ է բերում նշանաւոր պատմաբան Կրաուսի խօսքն այն մաս ինչ որ ազգերի արուեստը գերեզմաններից է սկսւում, եւ այնուհետեւ աւելացնում է. «Դա ճշմարիտ է ոչ միայն նախնական ազգերի համար, այլեւ յետագայ դարերի արուեստի նոր հոսանքների ընդունելութեան ժամանակ»: Տապանաքարերի նշանակութիւնը չի սահմանափակւում միայն քարագործ վարպետների գեղարուեստական ճաշակի ու հմտութեան աստիճանով. դրանց վրայի պատկերներում արտացոլում են գտել բնակչութեան կենցաղի, ծեսերի, առօրեայ զբաղմունքի, մասնաւորապէս զինավարժութիւնների ու որսի տեսարանները, տարազը եւ այլն: Ըստ էութեան, հանգուցեալի տապանաքարի վրայ տխուր յիշատակագրութիւնների փոխարէն կեանքի ու պայքարի դրսեւորումների, նոյն իսկ երաժիշտ-նուագածուների պատկերումը իւրօրինակ կերպով արտայայտել է ժողովրդի լաւատեսութեան, յարատեւութեան, արդարութեան, յոյսի գաղափարը:

«... Եգիպտոսի արուեստս ու մշակոյթը,- գրում է Գարեգին Յովսէփեանը,— պատմութեան մէջիրենց բազմատեսակ հասկացողութիւնների մարմնացումն է: Յունական արուեստն ու գրականութիւնը իրենց բոլոր ճիւղերով կապուած են (եւ հասկանալի) յոյն ժողովրդի կրօնական ըմբռնումներով միայն»: Մենք այստեղ էլ կ'աւելացնենք, որ Արցախի տապանաքարերի արուեստում կայ թէ Հոգու անմահութեան, թէ կրօնական ու, թերեւս ամենից շատ կեանքի պահպանման ու յարատեւութեան գաղափարը:

Արցախի միջնադարեան մշակոյթի մէջ լայն տարածում են ստացել տեգորադիւ-կիրառական արուեստները: Նկատի ունենք կենցաղային գործածութեան իրերը գաւաթներ, սափորներ, սկուտեղներ, պղինձներ, տաշտակներ, մոմակալներ, ճրագամաններ, գաթանախշեր, մաֆրաշներ, տօնական տարազի տեսակներ եւայլն: Որպէս կանոն, դրանք իրենց ընդհանուր ձեւերով ու վրայի նախշերով նմանւում են Հայաստանի միւս նահանգների համանման իրերին: Արցախցիները սակայն աւելի սիրել են մակերեսների մանրազարդումը: Դա տեսնում ենք յատկապէս շքեղ ճարմանդներ ունեցող արծաթեայ (երբեմն ոսկեզօծ) գօտիների, գլխի թասակների ու կանանց զարդերի վրայ: Մեծ մասամբ դրանք վերադիր ուռուցիկ ու սեւադապատ սալիկներ են, երկրաչափական ու բուսական զարդեր յաճախ միահիւսուած կենաց ծառի, յարատեւութեան նշանների, կենդանապատկերների ու թռչնապատկերների հետ: Դարանց վրայ ագուցւում էին թանկարժէք ու կիսաթանկարժէք քարեր:

Ճիշտ է, Արցախի քաղաքական պատմութիւնը նպաստաւոր չի եղել տեգորադիւ ու մանր արուեստների ողջ ժառանգութիւնը պահպանելու համար (շա-

բունակուող արշաւանքները, աւեածութիւններ, թալանը շատ բան են կորստեան ու օտարութեան մատնել), այնուամենայնիւ այն, ինչ հասել է մեզ չափազանց արէժքաւոր է:

Յիշատակենք առաջին հերթին մեր ձեռագիր-մատեանների կաշուէ ու մետաղեայ կազմերը: Դրանց վրայ երբեմն տեղադրուած են լինում արծաթեայ պատկերազարդ սալիկներ (մեծ մասամբ կենդրոնում ու չորս անկիւններում): Թանկարժեք քարերով զարդարուած ոսկեզօծ արծաթեայ կազմ է ունեցել «Թարգմանչաց» նշանաւոր աւետարանը (Մատ. թիւ 2743): Այն պատրաստել է տուել Գրիգոր իշխանը 1301 թուականին: Ձեռագրի յիշատակարանում այդ մասին կարդում ենք «...եւ այր Մեծ Իշխան Գրիգոր (Արցախի) զարդարեալ պճնէ զսա ոսկւով եւ արծաթով ի յիշատակ Հոգւոյ ամուսնոյն իւր Ասփիային... պճնեալ շքեղացոյց նաեւ զսուրս Աւետարանս ոսկենկար կազմածով»: Յաւել կարելի է միայն, որ արուեստի այդ ընտիր նմոյշը յափշտակու ել է XVIII դարում:

Կիրաւական արուեստի գեղեցիկ մի նմոյշ է իշխան Հասան Ջալալի դաշոյնի մուգ կանաչ նէֆրիտէ երախակալը (բռնակ), որն այժմ պահւում է Էրմիտաժում:

Դրա ներքեւի ու գլխի մասերը ծածկուած են բուսամոդիւների նուրբ նախշազարդերով: Ի դէպ, բռնակի վրայ փորագրուած է «Հասան Ջալալ Խաչենոյ»:

Սիւնիք-Արցախի մշակութային ընդհանուր միջավայրի հետ է կապւում նաեւ Խոտակերաց Սուրբ Նշանի 1300 թուականի յայտնի մասնատուփը: Գ. Յովսէփեանը նշում է, որ այդ մասնատուփը «Իւր հնութեամբ միակն է Արեւելեան Հայաստանի ոսկերչական նման գործերից, չհաշուած կիլիկեան շրջանի մի քանի մնացորդները, ուստի եւ՝ շատ արէժքաւոր հայ մանր արուեստներ ի պատմութեան համարի: «Պատմութիւն Աղուանից աշխարհի» հեղինակ XVII դ. պատմիչ Մովսէս Կաղանկատուացին է:

«Արծիւ» - արուեստ, Ա տարի,
7 դեկտեմբերի, 2000, թիւ 163-164

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆԸ

Հայրենի արուեստաբանութեան ականաւոր դէմքերէն դոկտ. փրոֆեսէօր Հրաւարդ Յակոբեանի ծննդեան 70ամեակին առիթով, եթէ ակնարկ մը նետենք անոր ստեղծագործական վաստակին վրայ, կը նշմարենք, թէ ան առանց իր անունին շուրջ աղմուկ ստեղծելու գրած եւ հրատարակած է ուշագրաւ եւ հայ մշակոյթին համար մնայուն արժէք ներկայացնող շարք մը ուսումնասիրութիւններ ու մենագրութիւններ, առանց որոնց, կարելի չէ ուսումնասիրել հայ միջնադարեան մանրանկարչութիւնը, յատկապէս՝ վասպուրականի դպրոցը:

Հրաւարդ Յակոբեանի հրատարակած աշխատութիւնները, պատկերագիրքներն ու յօդուածները կը վկայեն, որ ան առաւելաբար կեդրոնացած է Վասպուրականի մանրանկարչութեան ուսումնասիրութեան ու մեկնաբանութեան վրայ: Այս առումով, անոր ստեղծագործական կեանքը յատուկ իմաստ եւ կշիռ կը ստանայ հայ մշակոյթին համար:

Ս. Ծ.
«Ազդակ», Լիբանան, հունվար, 2001

ԽՆԱՄՅԱԼ ՈՒ ՄՏԱՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արցախյան գոյամրտը միայն քաղաքական, տարածքային ու միջէթնիկական խնդիր չէ, ուստի նրա ընթացքին հետևում են և արդարացի ելք ակնկալում գիտության ու մշակույթի այլազգի ոչ քիչ հեղինակություններ: Տասնամյակներ շարունակ այդ երկրի քաղաքական իշխողները հետևողականորեն «մոռացության» են տվել տարածքի բնիկ պատմությունը, մշակութային արժեքները վերագրել իրականում գոյություն չունեցող էթնիկ հանրության՝ նորՕրյա կազմավորում ունեցողներին՝ նրան ժառանգորդ հայտարարելով: Ցավով պիտի խոստովանել, որ նման վերագնահատմանը բավականաչափ նպաստել է նաև հայագետների ոչ բավարար հետևողականությունը: Նրանք կարծես չէին կռահում, թե Արցախի պատմության ու մշակույթի «աղվանացում-ադրբեջանականացումը» միայն գիտական բարեխղճության պակաս չէ, այլ նաև քաղաքական պատվեր: Ամենևին ներելի չէ, որ «Լեռնային Ղարաբաղ» վերտառություն կրող պատմական փաստացի տեղեկանք լույս տեսավ միայն այն ժամանակ, երբ Արցախի խնդիրը պատերազմական լուծում էր թելադրում: Եվ այնուամենայնիվ, արժանին պիտի հատուցել հայ ու օտար այն գիտնականներին, մասնավորապես՝ Կարապետ Մելիք-Օհանջանյան, Աստուր Մնացականյան, Պարույր Սևակ, Լևոն Խաչիկյան, Բագրատ Ուլուբաբյան, որոնք անսացին ժամանակի պահանջին և լծվեցին հայոց այդ բնօրրանի անցյալի ճշմարտացի հետազոտությանն ու գնահատմանը: Այդ կարգի արդյունավոր պրպտողներից մեկը Մատենադարանի աշխատակից, արվեստագիտության դոկտոր պրոֆեսոր, Հրավարդ Հակոբյանն է, որին ընթերցողը լավածանոթ է Վասպուրականի միջնադարյան արվեստին նվիրված հատորավոր հրատարակություններով: Արցախյան իրադարձություններից մեկ տարի առաջ 1987 թ. լույս ընծայվեց նրա «Արցախ-Ուտիքի 13-14-րդ դդ.,մանրանկարչությունը» տարիների պրպտումների արդյունք հանդիսացող գիրքը, իսկ մեր ազգային պայքարի թեժ օրերին՝ «Արցախի միջնադարյան արվեստը» (1991թ): Ընդ որում, վերջինը երեք լեզուներով էր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Ահա, ճանաչված արվեստաբանի ու Եվրոպայի ավետարանական ու հոգևոր մշակութանպաստ կազմակերպության պրեզիդենտ Մանֆրեդ Ռիխտերի ջանքերով, վերջերս Բեռլինում, գերմաներեն լեզվով լույս ընծայվեց շքեղեզարդ և ծավալուն մի հատոր «Հայկական Լեռնային Ղարաբաղ-Արցախ, քրիստոնեական արվեստը, մշակույթը, պատմությունը գոյատևման պայքար» վերնագրով:

Գիրքը բացվում է հայոց Վեհափառ Հայրապետի մաղթանքի ջերմ խոսքերով, որտեղ մասնավորապես ասվում է. «Ձեր սույն նախաձեռնությունը մեծապես պիտի նպաստի. որ արևմտյաեն աշխարհը լավ ճանաչի և ուղիղ հասկանա մեր օրերի արցախյան հերոսամարտը, որ մղվում է հանուն ազատության և քրիստոնեական նվիրական արժեքների»: Վեհափառի խոսքին հաջորդում են

Բեռլինի արքեպիսկոպոս դոկտոր Մարտին Կրոսի և Քյոլնի հայոց եկեղեցու եպիսկոպոս Գարեգին Բեգջյանի ուղերձ-մաղթանքները: Գրքի հրատարակիչ-խմբագիր Մանֆրեդ Ռիխտերը չի խնայել գնահատության ու դրվատանքի ջերմ խոսքեր ասել բարերար Արա Մովսեսյանի մասին (1920-1991 թթ.), որի կտակի համաձայն հովանավորել է սույն հատորի հրատարակումը:

Հիմնականում օգտագործելով իր նախորդ աշխատություններում կատարած ուսումնասիրությունների արդյունքը՝ Հրավարդ Հակոբյանը համառոտ, բայց պատկերավոր ու հագեցած փաստացի նյութերով ներկայացնում է Արցախի պատմության ուղին սկսած վաղ միջնադարից: Այնուհետև անդրադառնում է Արցախում զարգացած գրականության, ճարտարապետության, որմնանկարչության, մանրանկարչության և կիրառական արվեստի նվաճումներին: Ի դեպ, չափազանց ուշագրավ է արվեստագետի մի հատաքրքական տեղեկությունը գոբելենատիպ գործվածքների մասին: Իր ուսումնասիրությունների ընթացքում Հրավարդ Հակոբյանը պարզել է, որ ֆրանսիացի Գոբելեն եղբայրներից շատ առաջ նման գործվածքներ պատրաստվել են Հայաստանում, մասնավորապես Արցախում (13-րդ դ.): Ընդ որում, այդ արվեստով զբաղվել են նույնիսկ իշխանական տոհմի կանայք և դուստրեր (Հաթերքի Վախտանգ իշխանի կին Արզուխաթունը և նրա դուստրերը): Արվեստի հուշարձանների ներկայացներ կայացնելուն զուգընթաց, հեղինակը, անհրաժեշտության դեպքում, որոշակի տեղ է հատկացնում պատմական անցուդարձերին, քաղաքական իրադարձություններին:

Գրքի շահեկան կողմերից մեկն էլ այն է, որ նյութը ուղեկցվում է շուրջ 45 գունավոր և նույնքան էլ սև ու սպիտակ որակյալ արտատպություններով, որոնց մեծ մասը առաջին անգամ է ներկայացվում Եվրոպայի ընթերցողներին:

Արցախի պատմությանն ու միջնադարյան մշակույթին նվիրված այս հատորը առիթ է ընձեռել ընթերցողին ներկայացնելու հայոց երկրի և Արցախի նորագույն ժամանակաշրջանի հրատապ խնդիրները: Հայագիտական կարևոր հրատարակություններով ծանոթ Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը Բեռլինի ազատ համալսարանի դոկտոր Ժիրայր Քոչարյանը անդրադառնում են հայ եկեղեցու պատմության կարևոր դրվագներին՝ «Հայ ժողովրդի պատմական ուղին ու նրա եկեղեցին», «Գանձասարի և «Աղվանական» կաթողիկոսությունը 4-19-րդ դդ.»:

«Գոյատևման պայքարն այսօր» խորագրի տակ առանձին նյութերով. դիտարկումներով ու արծարծումներով հանդես են եկել հայ և եվրոպական պատմության ու մշակութային կյանքի նշանավոր գործիչներ, հանրահայտ կինոբեմադրող Դոն Ասկարյանը, Անգլիայի պառլամենտի փոխխոսնակ, կոմսուհի Քարոլայն Քոքսը, անվանի հայագետ-կովկասագետ, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, եպիսկոպոս Ոսկան Կալպակյանը, հասարակական ծանոթ գործիչ, հմուտ միջնադարագետ Հերմուն Գոլցը: Նրանց գրառումները ներկայացնում են Արցախի պայքարի շրջափուլերը, պատմական խորքը, ընթացքն ու սպասելի

հեռանկարը: Թերևս վիճարկելի դրույթներ ևս կան, բայց կարևորը անաչառ ու շահագրգիռ միջամուխ լինելն է, հարցը իր բոլոր կտրվածքներով ներկայացնելը:

Հատորի վերջում Մանֆրեդ Ռիխտերը ներկայացրել է իր «Յովհաննես Լեպսիուսը և Հայաստանի ճակատագիրը» ուշագրավ աշխատանքը, որը հրատարակվել է դեռևս 1988-ին Բեռլինում: Պատահական չէ մեծ հումանիստի առաքինի գործունեությանն անդրադառնալը, որը դեռևս հայոց Մեծ եղեռնի օրերին իր հուժկու ձայնը բարձրացրեց (հակառակ կայզերական Գերմանիայի լուռ թողտվությանը) ի պաշտպանություն անդունդի եզրին կանգնած տառապող հայ ժողովրդի և առաքելական եկեղեցու:

Սույն հատորն օժտված է նաև մի շարք կարևոր փաստաթղթերով, ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Արցախի պատմական քարտեզներով, Լեռնային Ղարաբաղ-Արցախ նահանգի հետ կապված բազմաթիվ փաստաթղթերով, սկսած 1919 թ. մինչև մեր օրերը (դրանց թվում են նաև Սումգայիթի ողբերգության զոհերի ցուցակները):

Հիրավի, մեծ գործ է կատարված եվրոպական ընթերցողին իրազեկ դարձնելու մեր հինավուրց ժողովրդի արցախյան «հատվածի բարձր մշակույթի, նրա պատմության ինքնահաստատման հերոսական մաքառման հետ: Եվ այստեղ երախտիքի ամենաջերմ զգացում ես տածում այս գործի ստանձման գլխին կանգնած բարեպաշտ քահանա Մանֆրեդ Ռիխտերի հանդեպ: Ճշմարտասիրության ու հումանիզմի ներքին ինչ ուժ կա այդ մարդու հոգում՝ շարունակելու իր երջանահիշատակ նախորդների հայանպաստ գործը: Հիշենք կրկին Լեպսիուսին, Յոզեֆ Մարկվարտին, Լեման Լաուպտին, Հայնրիխ Հյուբշմանին, Կարստին, Վեբերին, Բլանխորդին, Գոնդոստիս...

Այդ մեծերի թողած ավանդույթների հոգեհարազատ ծնունդն է Մանֆրեդ Ռիխտերը՝ հայ ժողովրդի մեծ բարեկամը: 70-ական թվականներից սկսած, նա եղել է Գերմանիայում, մասնավորապես Բեռլինում, հայոց պատմության, առաքելական եկեղեց ու և մշակույթի խնդիրների հետ առնչված միջոցառումների հոգին: Նա հայոց կյանքին ու հայ ժողովրդի ճակատագրին նվիրված մեկ տասնյակից ավելի հոդվածների հեղինակ է:

«Թող իմ հայրենակիցներն իմանան,- գրում է Մանֆրեդ Ռիխտերը,- Ձեր երկրի ու պայքարի պատմության ճշմարտությունը, թող ծանոթանան փաստերին»:

Այս գրքի հրատարակումը հիրավի երևույթ է, արժանի ոչ միայն պատշաճ գնահատության, այլ նաև շարունակման ու զարգացումի: Հուսանք, որ այն անծանոթ չի մնա հայաստանյան ընթերցողին՝ թերևս հայերեն ու ռուսերեն հրատարակություններով:

Էմմա Կորխմազյան
«Հայաստանի Հանրապետություն», փետրվար, 1994

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը, ավարտելով Երևանի պետական համալսարանը, իր ողջ գիտական գործունեությունը կապեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հետ (1960 թվականից):

Մատենադարանը բուն հայագիտության այն մոգական գիտական օջախն է, որ հրապուրում է գրեթե բոլոր վաստակավոր և նորընծա հայագետներին ամեն ազգից և երկրից: Երիտասարդ հասակում Հակոբյանը բարեբախտություն ունեցավ շփվելու հայ արվեստի խոշորագույն ուսումնասիրողներ Լ. Դուռնովոյի, Ս. Տեր-Ներսեսյանի, Ռ. Դրամբյանի, Տ. Իզմայլովայի հետ, որոնց աշխատությունների շնորհիվ հայ միջնադարյան արվեստն իր առայժմ ոչ այնքան մեծ, բայց կարևոր և կայուն տեղը գտավ բազմաթիվ հանրագիտարաններում և մասնագիտական հիմնարար աշխատություններում: Հենց Մատենադարանի բուն միջավայրը հայ միջնադարյան մշակույթի և բանահյուսության գիտակների՝ ակադեմիկոսներ Լ. Խաչիկյանի, Ա. Ղանալանյանի, Ս. Արևշատյանի, Աս. Մնացականյանի և ուրիշների շնորհիվ ստեղծում էր նպաստավոր հայաշունչ մթնոլորտ, սնելով շատ ու շատ երիտասարդ գիտնականների: Ըստ էության, դրա շնորհիվ էր, որ Հր. Հակոբյանն առաջինը համարձակություն ունեցավ Վասպուրականի մանրանկարչության պարզության և արխայիզմի (հնավանդության) ակունքները մի շարք գծերով բացահայտել կողմնակի նյութի միջոցով. հայ ժողովրդական բանահյուսությունն ու էպոսը բանալի դարձան հետազոտողի համար անպաճույճ այդ նկարներով բացահայտելու հիերոգլիֆային, հիպերբոլային (չափազանցում) և այլաբանական այն ենթալեզուն, որ դարերի խորքից ծվարել է այդ մանրանկարներում և օգնում է հասկանալու դրանց ինքնությունը քրիստոնեական աստվածաբանության և պատկերագրության ու ոճի շրջանակներում:

Շուրջ տասնհինգ տարի նա զբաղվել է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների ձեռագիր-մատյանների ուսումնասիրությամբ, դրան նվիրելով երեք մենագրություն և մեկ ալբոմ: Փաստորեն, առաջին անգամ արվեստագիտական շրջաններին ներկայացվեց մեր հայրենիքի ամենահինավուրց և ավանդապահ մարզի արվեստը:

Հր. Հակոբյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերի չորուցամաք ցանկը ցույց է տալիս նրա առօրյայի լարվածության աճը, հատկապես վերջին երկու տասնամյակներում: Հր. Հակոբյանի դեպքում, կարծես թե, գիտական և մանկավարժական բարձր կոչումները նրա համար են, որ մարդուն շնչելու ժամանակ չթողնեն:

Նա տասնութ մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է, որոնք հրատարակվել են հայկական և արտասահմանյան մշակութային կենտրոններում:

1980-ական թվականներից, կապված արցախյան ազատագրական գաղափարների և պայքարի հետ, Հր. Հակոբյանն սկսեց զբաղվել Արցախի միջնադարյան արվեստի հուշարձաններով: Հմուտ արվեստաբանի տքնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացավ 1989-ին հրատարակած «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դարերում» գիրքը, որով հայկական մատենական նկարչության մեջ հաստատվեց ինքնատիպ ու հետաքրքրական դպրոցի առկայությունը:

1991-ին լույս է տեսնում «Արցախի միջնադարյան արվեստը», որը, ինչպես նախորդ գիրքը, երեք լեզուներով էր: Իսկ 1993-ին, Բեռլինում, Գերմանիայի ավետարանական հոգևոր խորհրդի նախագահ, քահանա, մեծ հայասեր Մանֆրեդ Ռիխտերի և Հր. Հակոբյանի ջանքերով հրատարակվեց «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը...» կապիտալ հատորը, որտեղ Հր. Հակոբյանի հետ համահեղինակներ էին եվրոպացի մի քանի նշանավոր գիտնականներ: Եվրոպայում դա առաջին դեպքն էր, երբ Արցախի արվեստն ու քաղաքական խնդիրները ներկայացվում էին համակողմանի և անաչառ կերպով, այն էլ գերմաներեն լեզվով: Այդ աշխատանքների համար Հրավարդ Հակոբյանը 1996 թվականին արժանացավ Արցախի Հանրապետության Եղիշեի անվան պետական մրցանակի:

1998-ին Հր. Հակոբյանը համատեղության կարգով հրավիրվեց Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, նախ որպես ամբիոնի վարիչ, ապա՝ ամբիոնի պրոֆեսոր: Այստեղ էլ, հետամուտ ուսանող երիտասարդության արվեստագիտական իմացության եւ գեղարվեստական դաստիարակության շնորհակալ գործին, Հր. Հակոբյանը լույս ընծայեց «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց ծրագիրը» և իր բնագավառում աննախադեպ «Կերպարվեստը հայոց կրթարաններում» արվեստի ուսուցման պատմության առաջին հատորը, որը ընդգրկում է հին, հելլենիստական շրջանը եւ միջնադարը:

Ի թիվս գիտական լուրջ արժեք ներկայացնող գրքերի, 2003 թ. լույս ընծայվեց «Հայոց տերունական սրբապատկերները» գիտաուսումնական կարևոր աշխատությունը: Նորանոր մատենագրական, պատմական վկայությունների և բազմապիսի համեմատական ու իրական նյութերի օգտագործմամբ, Հր. Հակոբյանը բնութագրում է հայկական սրբապատկերի առանձնահատկությունները: Այս հրատարակությամբ, ինչպես նշել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկի հայկական բաժանմունքի տնօրեն Զ. Եկավյանը՝ «միջնադարյան հայ գեղարվեստը մեզի կներկայանա գիտական համակողմանի և խորագնին վերլուծությամբ, հայոց սրբապատկերներուն տալով պատմագիտական արժեք և ճանաչողություն»:

Բեղուն է նաև Հրավարդ Հակոբյանի հասարակագիտական գործունեությունը: Նա մի շարք բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների գիտական խորհուրդների և գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամ է:

Ամփոփելով ասենք, որ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանն իր կյանքն անմնացորդ նվիրել է գիտությանը և մանկավարժությանը ոչ միայն տասնյակ գրքերով և հոդվածներով, այլև միջազգային մի շարք սիմպոզիումներում ներկայացրել և պրոպագանդել է հայ միջնադարյան արվեստը, ստեղծել արժեքներ, որոնք մեծապես հարստացնում են հայագիտությունը և հայ արվեստագիտական իմացությունը: 2003 թ. նա արժանացել է Հանրապետության նախագահի շնորհագրին:

Մեր խոսքն ավարտենք Բեյրութի «Ազդակ» թերթի խմբագրականի հետևյալ խոսքերով. «Եթե մի ակնարկ նետենք հայրենի արվեստաբանության ականավոր դեմքերից դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ստեղծագործական վաստակի վրա, կտեսնենք, որ նա առանց իր անվան շուրջ աղմուկ ստեղծելու, գրել և հրատարակել է ուշագրավ և հայ մշակույթի համար մնայուն արժեք ներկայացնող մի շարք ուսումնասիրություններ ու մենագրություններ, առանց որոնց հնարավոր չէ ուսումնասիրել հայ միջնադարյան արվեստը»:

Վիգեն Ղազարյան
«Կրթություն», 14 դեկտեմբերի, 2005

ՀԱՅՈՑ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Քրիստոնեական Եկեղեցում առանձնահատուկ տեղ ունի սրբապատկերը՝ իկոնան: Սրբապատկերը զարդարում, ձևավորում, համախմբում և մեկտեղում է եկեղեցու ներքին՝ աղոթական-խորհրդապաշտական տարածքը: Արդեն Դ դարում աստվածաբանորեն ձևակերպվել և հստակվել էր սրբապատկերի ընկալման կերպը եկեղեցական կյանքում: Հոգևոր կյանքի փորձառությունը ցույց էր տվել, որ սրբապատկերը նպաստում է ավելի պատկերավոր ու ամբողջական դարձնելու քարոզչական խոսքը, պարգևում հոգևոր մխիթարություն՝ յուրահատուկ կապ ստեղծելով պատկերվածի ու աղոթողի միջև, ներգործում դիտողի խղճմտանքի վրա, հեռու պահում մեղսածին մտքերից, տեսանելի կերպով հիշեցնում և ուսուցանում աստվածաշնչյան պատմություններն ու պատգամները և այլն: Այսպես էր սրբապատկերի նշանակությունը մեկնաբանվում ընդհանրական եկեղեցում, որի մի մասն էր նաև Հայոց Եկեղեցին:

Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է, որ աստվածային հրաշքով ի հայտ եկած առաջին երկու սրբապատկերները՝ անձեռակերտ Դաստառակը և Աստվածամոր պատկերը (որոնցով փաստորեն սկզբնավորվեց քրիստոնեական սրբանկարչության արվեստը), պատկանել են Հայոց Եկեղեցուն: Սա խոսում է այն մասին, որ մեր Եկեղեցում պատկերների կիրառությունը սկսվել է շատ վաղուց: Հետագայում հայ եկեղեցական կերպարվեստը մեծ ծաղկում ապրեց: Միջնադարյան հայ արվեստագետները ստեղծեցին բազմաթիվ բարձրարվեստ և պատկերագրորեն առանձնահատուկ աշխատանքներ: Զարգացան որմնանկարչությունը, մանրանկարչությունը, քանդակագործությունն ու խաչքարի արվեստը: Անշուշտ, գեղարվեստական այդ համակարգում էր նաև սրբապատկերը:

Մեզ հայտնի է Հայոց Եկեղեցու վերաբերմունքը սրբապատկերի վերաբերյալ, այն հիմնված է Ընդհանրական Եկեղեցու հայրերի արտահայտած տեսակետների վրա: Ինչպիսի՞ն էր Հայոց սրբապատկերը: Կա՞ր արդյոք զանազանություն հայկական սրբապատկերի և ասենք բյուզանդականի միջև, և եթե կար, ո՞րն էր տարբերությունը: Այս հարցը երկար ժամանակ դուրս էր մնացել միջնադարյան հայ արվեստն ուսումնասիրողների տեսադաշտից:

Այստեղ տեղին է հիշել հայագետ Կարապետ Կոստանյանի խոսքերը («Հին հիշատակներ», «Արարատ», 1897 թ.), որ վերաբերում է Հայոց հնագույն սրբապատկերներին՝ Հիսուսի Դաստառակին, Հովհաննես Ավետարանչի նկարած Ա. Աստվածամոր պատկերին և Հավուց Թառի Ամենափրկչին: Հոդվածագիրը հետևյալ հարցն է տալիս. «Հետաքրքիր է իմանալ ուր և ո՞ր ժամանակից գոյութիւն ունին հայոց վանքերում և եկեղեցիներում հէնց այդպիսի պատկերներ, և ինչպիսի՞ գծագրութիւն ունին նոքա, և երկրորդ, աչքի առաջ ունենալով, որ Ս. Աստուածածնի անուանը նուիրուած բազմաթիւ հին վանքեր կան,

պէտք է մտածել, որ նոքա ունեցել են և պատկերներ քանդակուած կամ նկարուած. նոյն Տիրամօր նկարներով լի են և հայոց գրչեայ մատեանները. ցանկալի է հրատարակել այդպիսի քանդակների և նկարների մի ժողովածու, որպէս զի կարելի լինի նոցա ուսումնասիրութեամբ գաղափար կազմել, թէ ո՞րն է այն առանձնութիւնը, որով ջոկում էին հայոց պատկերները ուրիշներից»: Այս հարցադրումը կատարվել է հարյուր տարի առաջ...

Օրերս հայ արվեստաբանական գրականությունը հարստացավ ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի «Հայոց Տերունական սրբապատկերները» աշխատությամբ: Կարող ենք փաստել, որ այստեղ Կ. Կոստանյանի առաջ քաշած հարցերը ստացել են իրենց պատասխանը:

Նկատի ունենալով նյութի ծավալը՝ հեղինակն աշխատության մեջ քննության առարկա է դարձրել միայն Հիսուս Քրիստոսի, Ս. Խաչի և Ս. Աստվածամոր պատկերները: Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է քրիստոնեական պատկերագրության սկզբնավորումը, պատմական վկայությունների, ավանդության և քրիստոնեական ծեսի ուսումնասիրությամբ քննության առել գաղափարական այն հենքը, որի վրա զարգացավ սրբապատկերը: Այս աստվածաբանական-գեղարվեստական համակարգի միջոցով էլ գնահատվել են սրբապատկերի էությունն ու նշանակությունը:

Շեշտել է Ցայումյան դիմանկարի (Ն. Ք. Դ դար - Բ դար) դերը սրբապատկերների ձևավորման գործում և առանձին-առանձին ներկայացրել Հիսուս Քրիստոսի, Ս. Աստվածամոր այդ ժամանակ ընդունված պատկերագրական տիպերը:

Հիսուսի Դաստառակին վերաբերող պատմական փաստերն ու բանավոր ավանդազրույցներն ի մի բերելով՝ Հ. Հակոբյանը փաստում է, որ վաղ միջնադարյան Հայաստանում եղել են սրբապատկերներ: Ինչպես, օրինակ, Հոգյաց վանքի Ս. Աստվածամոր պատկերը,

Խոր Վիրապի Աստվածամոր պատկերը, Հիսուս Քրիստոսի սրբապատկերը Վարագավանքում և այլն:

Ամփոփելով ասելիքը՝ հեղինակն անդրադառնում է սրբապատկերի նկատմամբ այն նոր մոտեցումներին, որոնք ձևավորվեցին Քաղկեդոնի ժողովից հետո:

Լրջորեն ու ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է VI-XVII դդ. Տերունական այն սրբապատկերներին, որոնք տեղ են գտել հայկական մանրանկարչության, քանդակագործության և որմնանկարչության մեջ: Խոսքը վերաբերում է այն պատկերներին, որոնց գաղափար օրինակները սրբապատկերներ են (իկոնա):

Ուսումնասիրությունից դուրս չի մնացել նաև նոր շրջանը (XVII դ. - XVIII դ. I կես), որը բեկումնային էր հայկական մշակույթի համար: Եվրոպական մշակութային կյանքում, հատկապես գեղարվեստական մտածողությունում

տեղի ունեցած ահռելի փոփոխությունները, իրենց ուղղակի կամ միջնորդավորված ազդեցությունն ունեցան նաև հայկական արվեստի և մասնավորապես սրբանկարչության վրա:

Արդեն ԺԶ դարից հայ մանրանկարիչները հատուկ ուշադրություն ցուցաբերեցին դիմանկարին: Այդ տիպի մանրանկարները սկսեցին մոտենալ հաստոցային գեղանկարչության սկզբունքներին: Դրանց ազդեցությամբ փոխվեցին Ս. Աստվածամոր պատկերագրական տիպերը, որոնք անփոփոխ էին ողջ միջնադարի ընթացքում՝ Օդիգիդրիա, Օրանտ և այլն: Սակայն նոր գաղափարախոսությունը, որը հաստատվել էր հայկական կերպարվեստում, զարգանում էր՝ համապատասխանելով ազգային և եկեղեցական առանձնահատկություններին՝ հաստատելով արվեստի զուտ հայկական պատկերացումները: Դրան էին նպաստում իրենց տեսական աշխատություններով ժամանակի հայ մտածողները՝ Սիմեոն Ջուղայեցին (ԺԶ դարի վերջ - 1657 թ.), Ստեփանոս Լեհացին (ԺԷ դ. սկիզբ - 1687 թ.), Հովհաննես Ջուղայեցին (1643-1715 թ թ.) և այլն:

ԺԷ դարը շրջադարձային եղավ հայ մշակույթի համար: Այդ շրջանում կերպարվեստում գնահատվում և արժևորվում է աստվածաստեղծ մարդու անհատականությունը: Սկսեցին մեծ տարածում գտնել հաստոցային ընույթի սրբապատկերները:

Գրքում սրբապատկերների քննությունը կատարված է նաև ըստ ստեղծման ժամանակի և տեղի: Այսպես՝ ա) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Պատմական Հայաստանում, բ) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Ռուսաստանում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, գ) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Նոր Ջուղայի մշակութային միջավայրում:

Սրբապատկերներից առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև նրանք, որոնք դրվագված են ձեռագիր մատյանների կազմերին և գրեթե անհայտ են արվեստասերներին:

Այսպիսով, Հրավարդ Հակոբյանի «Հայոց Տերունական սրբապատկերները» աշխատությունը՝ նյութի ընդգրկմամբ, վերլուծությամբ և մատուցման խորությամբ, ծանրակշիռ ներդրում է հայկական սրբապատկերի ուսումնասիրման բնագավառում:

Ավելացնենք նաև, որ այս կարևոր աշխատության հրատարակությունը հնարավոր եղավ «Տաթև» գիտակրթական համալիրի գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի անմիջական ջանքերով ու ամբողջական հովանավորությամբ:

Ավետ Ավետիսյան
«Քրիստոնյա Հայաստան», սեպտեմբեր, 2003, A

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ, ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Ծնվել է 1930 թվականի սեպտեմբերի 13-ին Էջմիածին քաղաքում: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը և Երևանի պետական համալսրանի պատմության ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Հրավարդ Հակոբյանի հեղինակությամբ լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված Վասպուրական նահանգի, Արցախի ճեռագիր մատյաններին, պատմական հուշարձաններին և մշակույթին: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում իրականացրել է գիտամանկավարժական գործունեություն, հեղինակել «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց» և «Կերպարվեստը հայոց կրթարաններում» գրքերը:

2003 թվականին լույս է տեսել Հրավարդ Հակոբյանի «Հայոց Տերունական Սրբապատրկերները» աշխատությունը:

2005 թվականին արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման, իսկ 2009 թվականի Հրավարդ Հակոբյանի համահեղինակությամբ «Հայ արվեստի պատմություն» աշխատությունն արժանացել է պետական մրցանակի: Հրավարդ Հակոբյանը մի շարք համալսարանների գիտական խորհուրդների անդամ է, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր: Արժանացել է բազմաթիվ շքանշանների և մեդալների:

Սեպտեմբերի 28-ին Թեքեյան մշակութային կենտրոնում հավաքվել էին հանրապետության գիտության, կրթության, մշակույթի գործիչներ՝ շնորհավորելու ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Հրավարդ Հակոբյանի ծննդյան 80-ամյակը:

Միջոցառումը բացեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Միրզախանյանը: Նա խոսեց հոբելյարի գիտական գործունեության, աշխատանքային խանդավառության, մարդկային որակների մասին և Թեքեյան մշակութային միության անունից նրան հանձնեց «Ադամանդակուռ Արարատ» շքանշան:

Հրավարդ Հակոբյանի կյանքն ու գործունեությունը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, գիտության, կրթության

և մշակույթի ոլորտում լայնածավալ գործունեությունից զատ խոսելով հոբելյարի կենսասիրության, յուրահատուկ հումորի և բարության մասին:

«Իսկական մտավորականը պայքարում է ճշմարտության համար, իր անձնականը զոհում հասարակության շահերին»,– ասաց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանը, իսկ ակադեմիկոս Սեն Արևշատյանը, ով շուրջ 50 տարի Մատենադարանում աշխատել է Հակոբյանի հետ, մաղթեց՝ կյանքի 80 տասնամյակն ընդունել որպես հետագա աշխատանքի նոր լիցք:

«Նա բարի է, աներևակայելի անաչառ»,-ասաց Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը: «Այո, թերևս քիչ են այսպիսի մարդիկ, որ վայելում են շրջապատի բոլոր մարդկանց համակրանքը»,– ավելացրեց ԲՈՀ-ի նախագահ Լիլիթ Արզումանյանը: Ճարտարապետների անունից բարեմաղթանքի խոսք հղեց պրոռեկտոր Յուրի Սաֆարյանը, առավել ընութագրական էր արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանի խոսքը. «Գիտությունը նրա համար ապրելու միջոց չէ, այլ կենսաձև»: «Դուք հիմա վայելում եք Հրավարդ Հակոբյանի գիտական փառքը, իսկ ես ականատեսն եմ եղել նրա տարիների տքնանքի ու տառապանքի»,– ասաց ուսանողական ընկեր Բաբկեն Վարդանյանը միջազգային ասպետների միության անունից ընկերոջը հանձնելով մի յուրահատուկ մրցանակ՝ «Գիտության ասպետ» հավաստագիր:

Փառքի դափնիները յուրաքանչյուր մարդու համար տարբեր իմաստ ու նշանակություն ունեն, գիտության անխոնջ մշակի համար ամենակարևորը նոր արժեքներ ստեղծելն ու գիտական ուսումնասիրությունների նոր բարձունքներ նվաճելն է: Արտաքուստ բարետես, խառնվածքով համեստ ու բարի, էությամբ՝ ազնվաբարո մտավորական Հրավարդ Հակոբյանը մեղմ ժպիտով ու անկեղծ երախտագիտությամբ ընդունում էր իրեն ուղղված շնորհավորանքները, մտքում, թերևս, ծրագրելով հերթական գիրքը:

Սիլվա Ասրյան
«Մանկավարժական համալսարան»,
սեպտեմբեր, 2010

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայում լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մշակույթի վաստակավոր գործիչ Ռուբեն Միրզախանյանի և արվեստագիտության դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի հեղինակած «Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը» պատկերազարդ ալբոմը՝ ռուսերեն և անգլերեն, 1000 օրինակ տպաքանակով:

Տպագրության ծրագիրը իրականացվել է «Եվրասիական Մեդիա գրուպի» «Զա ռուբեժոմ» հրատարակչության աջակցությամբ: Պատկերազարդ գիրքը մեկ տարի առաջ լույս է տեսել հայերեն և անգլերեն լեզուներով՝ Հայաստանում: Այդ հրատարակությունը ողջունել են Հարվարդի համալսարանի նախագահ Դրյու Ջիլպին Ֆաուստը, Վատիկանի արխիվների և գրադարանների ղեկավար Ջին-Լուիս Բրյուգուեն, Պրադոյի ազգային թանգարանի տնօրեն Միգել Զուգազան, Նյու-Յորքի Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի ռեկտոր Մարի Փափազյանը,Նյու-Յորքի Սոլոմոն Ռ. Գուգենհայմ թանգարանի գրադարանի և արխիվի տնօրեն Ռիչարդ Արմսթրոնգը, Վաշինգտոնի Ազգային Պատկերասրահի տնօրեն Էռլ Ա. Պավել Յ-րդը, Բրիտանական թանգարանը և այլք:

Նշենք, որ «Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը» պատկերագրքում մեկտեղված է սոցռեալիզմի դարաշրջանի 170 ստեղծագործողի աշխատանք:

Այն կազմելիս հեղինակները խնդիր են ունեցել ներառել ոչ միայն բովանդակությամբ սոցռեալիզմի հետ առնչվող, այլև ընդհանրապես տվյալ ժամանակաշրջանում ստեղծված աշխատանքներ՝ անկախ այս կամ այն ուղղվածությունից:

Գրքի հեղինակները հնարավորինս խուսափել են անվանի արվեստագետների՝ բազմիցս տպագրված գործերի կրկնություններից՝ փորձելով արվեստասեր լայն հանրությանը ծանոթացնել այդ տարիներին աննկատ մնացած, երբեմն էլ տարբեր պատճառներով անուշադրության մատնված մի շարք աշխատանքներ, որոնք, հեղինակների կարծիքով, ուշագրավ են և գեղարվեստական արժեք են ներկայացնում:

«Հայաստանի Հանրապետություն»,
օգոստոս, 2018

НЕИЗВЕСТНОЕ ИЗВЕСТНОЕ ИСКУССТВО

По поводу того, что альбом “Социалистический реализм и изобразительное искусство советской Армении” смело можно назвать шедевром полиграфии, который к тому же издан не гле-нибуль в европах, а в отечественном издательстве "Тигран Мец", вряд ли кто-то станет спорить. Что до его содержания, капитальный труд создателей в дни, когда предложение поставить в Ереване памятник Анастасу Микояну вызвало острую реакцию, можно было бы назвать безумством храбрых - мы слишком легко, на бегу, расплевались с целой эпохой, не желая отделить зерна от плевел и осмыслить уроков истории. А ведь именно к этому в первую очередь призыв пот авторы книги - патриарх, доктор искусствоведения, профессор, лауреат Государственной премии Гравард Акопян и доктор исторических наук, профессор, ректор Государственного педагогического университета им. Х. Аоовяна Рубен Мирзаханян.

"Речь не о реабилитации, - считает Рубен Мирзаханян – Надо брать факты и по возможности объективно их комментировать, что на практике очень трудно. Но я уверен, чем дальше - поколение историков, которое придет после меня, обязательно проявит интерес к этой эпохе. Давайте будем откровенны. Как народ, мы потеряли государственность довольно давно и обрели ее вновь только в начале XX века. Кстати, за последние двадцать лет независимости уже появилось колоссальное количество исследовательских работ по Первой Республике, и это естественно, поскольку в советский период на эту тему наложили табу, а если ее и освещали, то только исходя из требований времени. Зато было колоссальное количество книг по советской эпохе. Они тоже были крайне однозначны и менялись в зависимости от конъюнктуры. Сейчас, в условиях независимой Армении, у нас есть возможность вполне свободно говорить и о Первой Республике, и о Второй. Но о Второй Республике еще нет достаточного количества исследований. Объяснять все на уровне - советский период, однопартийная система, все ясно! - совершенно неправильно. Потому что эти 70 лет - они были очень разными. А главное, для новейшей истории это очень большой, огромный промежуток времени. И, конечно, необходим анализ.

Каждый историк будет комментировать этот период по-своему и давать свои оценки. Но то, что это время необходимо изучать, говорить о нем, - это безусловно. В противном случае нам будет очень трудно понять перспективы нашего национального развития. Если мы хотим знать, кто мы сейчас есть и что с нами будет, ответы на эти вопросы надо искать в том, что с нами произошло. И изучать все это надо на различном уровне, представлять и в школьных учебниках, и для тех, кто интересуется этим глубоко, и даже для тех, кто вообще этим не интересуется. Скажем, история сквозь призму

политики может какую-то часть людей оставлять абсолютно равнодушными, но зато их волнуют искусство, культура. Наша книга - взгляд на эпоху именно сквозь эту призму. Мы долго работали и очень старались, чхобы это было интересно".

В том, что в плане "интересно" авторы более чем преуспели - независимо относишься ли к советской эпохе с нежной ностальгией или с зубовным скрежетом - убеждаешься, перелистав первые несколько страниц. "Социалистический реализм и изобразительное искусство советской Армении" - шикарный по форме и капитальный по содержанию труд в 500 страниц, который предваряют статьи Р. Мирзаханяна-историка и Г. Акопяна-искусствоведа на двух языках - армянском и английском. Исторический экскурс иллюстрирован фотографиями - просто уникальными, которые к тому же в переводном варианте не повторяются. Вот Гюрджян и Якулов, сопровождающие не кого-нибудь, а "самого доброго из людей", вождя мирового пролетариата товарища Ленина. Вот Ерванд Кочар демонстрирует Уильяму Сарояну свою новую работу - "Вардан Ма- миконян". Вот Никогосян - автор памятников Чаренцу и Налбандяну - с тем самым Анастасом Микояном...

А дальше 170 живописцев, скульпторов. графиков, художников, канонизированных и тех, кого вспоминают как бы не, в первую очередь, художников, которым искусствоведы уже давно нацепили бирочки с точным указанием художественной ценности и даже рыночной цены. Целый “соцреалистический” горный массив со своими пиками, пропастями и вершинами, давно этот соцреализм пережившими и оставшимися, - уже на века. И переворачивая страницы этого изысканного фолианта, понимаешь, что присутствует здесь не только академизм, но самый что ни на есть энциклопедизм - так масштабно и капитально представили авторы искусство эпохи.

“Соцреализм начался с литературы и был распространен на все области искусства, в частности, живопись, скульптуру, архитектуру, - комментирует Рубен Карленович. - Автор этой теории не Максим Горький, как это принято считать, а люди, которые работали в ЦК и так далее. И судьба у них потом была весьма тяжелая. Один из- отцов-основателей, Крепоткин, был потом арестован на 18 лет, как это часто происходило. И история смерти Горького и его сына является, как известно, загадкой... Наша книга не пропаганда соцреализма - наоборот. Здесь можно о многом говорить, но главный итог в том, что эта теория надуманна - не в “измах” дело, искусво либо есть, либо его нет”

Полотна, широко известные, памятники, украшающие наши улицы и площади, и работы не только малоизвестные но и публикующиеся впервые... Один из символов Еревана, кочаровский "Давид Сасунский", не только родной и знакомый до боли, но и совсем иной - каким он был до 1959 года... Множество раз виденное в Картинной галерее полотно Джотто "Памяти жертв Геноцида 1915 года", опрокинутые, скорбные лица - всего 90 лет назад оно называлось

"Нет вождя" и было написано по случаю смер ти Владимира Ильича... Совершенно не знакомый портрет Вагарша Вагаршана к кисти Дмитрия Налбандяна - самого дорогостоящего после Айвазовского и Сарьяна художника-армянина...

А вот и Мартирос Сарьян "Дружба народов" - огромная, многофигурная толпа в национальных костюмах народов СССР, которые мэтр долго выписывал, окружила резко жад всеми возвышающегося отца всех народов товарища Сталина. Широкоформатная работа была завершена в конце 1952 г., в марте следующего года вождь умер, и картина утратила актуальность, но не красочное великолепие сарьяновской кисти... а вот еще один Сталин - теперь уже на картине тончайшего, лиричного пронзительного Бажбеука-Меликяна. Работа была обнаружена в Гори и называется витиевато - "Товарищ Сталин в 1903 году ведет беседу с политзаключенными в кутаисской тюрьме"...

С хладнокровием британского джентльмена Гравард Акопян и Рубен Мирза- ханян организуют развеску этой соцреалистической галереи, чтобы ответить на вопрос - чем же было это искусство, кроме мощного идеологического оружия, и было ли оно вообще искусством? И сами тут же на ими же заданный вопрос отвечают - было, было, было!

Джордано Бруно, взошедший во имя своих убеждений на костер, вызывает восхищение. Но разве отречение Галилея (пускай со знаменитым "и все-таки она вертится!) способно отменить величие его открытия? Разве, рисуя папинквизиторов, Рембрандт и Эль Греко не создали гени- альные портреты? Умаляли ли свой талант Веласкес и Гойя, рисуя императоров, их жен, детей, придворных и даже их собачек? Разве гениального создателя Ватикана, трагического Микеланджело можно упрекнуть в "выполнении госзаказа"? А ведь большой художник не только увековечивает себя в истории, он увековечивает историю.

"На мой взгляд, исследуя задачи, которые государство ставило перед художниками, можно понять очень многое. Любое мифотворчество на государственном уровне ставит перед собой четкие задачи. Актуально ли это? Думаю, очень, - считает Рубен Мирзаханян. - Вот сейчас в свободной Армении есть национальная задача? Есть такое словосочетание, как патриотическое воспитание? И не надо ассоциировать это понятие с пионерами, барабанами и огромным количеством безумного идиотизма. Но наше время все равно требует своего, молодежи все равно нужны герои. И если умным дядям этих героев не преподносить воспитательным образом, основываясь на историческом прошлом, в герои так и будут выходить сегодняшние "успешные люди". Если этот вопрос оставить на самотек, мы придем не к лучшему результату".

Вглядываясь в страницы книги "Социалистический реализм и изобрразительное искусство Советской Армении", еще и еще раз удивляешься подборке

и выборке, сделанной ее создателями. Потому что первое бурное и сложно классифицируемое чувство возникает здесь не от энергетики того или иного шедевра в репродукции блестящего качества и даже не от обширности охвата материала, а от самого рядомстояния таких бесконечно разных по художественному языку, стилю, мироощущению, рисунку и колористике проявлений соцреализма.

За картиной с кинематографически названием "Утраченные иллюзии", на которой группа разочарованных футболных болельщиков выглядит стоп-кадром из фильма Феллини, следует памятник Дзержинскому, который стоял когда-то перед воротами КГБ. Глава ЧК держит в руке книгу. Вторая заведена за спину. Кочар автор памятника, комментировал: в той руке у него наган. Совсем уж соцреалистично выглядит параджановский коллаж "Пакт Молотова-Риббентропа" - весь в колючей проволоке. Присутствует здесь и укрупненными фрагментами литье решетки Крытого рынка, которую удалось спасти от разрушения и которое, по утверждению Рубена Карленовича, сейчас уже никто не сможет повторить хоть за миллион долларов. Есть здесь и памятники, которые сохранились только в фотографиях - "Гукас Гукасян" Сурена Степаняна, взорванный в революционной эйфории 90-ых.

"Думаю и надеюсь, что я не оригинален, страшная вещь, когда рушат или ломают произведение искусства. Конечно, надо быть осторожными, ставя памятники политическим лидерам, и, наверное, это надо делать во времени. Но насколько было правильно, когда их взрывали, уничтожали? Есть примеры, когда все памятники тоталитаризма собрали воедино и создали парк - не самое плохое решение вопроса. Ведь даже те работы, которые не представляют особой художественной ценности (а таких было очень и очень немало), тем не менее, отражение эпохи, времени, государственного заказа. И с этой точки зрения они представляют интерес. Кроме того, политическая конъюнктура не отменяет порой исключительной художественной значимости. И в любом случае, уничтожение произведений, пусть даже псевдопроизведений, - дикость и варварство", - считает Рубен Мирзаханян.

Книга "Социалистический реализм и изобразительное искусство советской Армении" вышла в свет. Авторы предлагают попытаться нащупывать пути в будущее сквозь арт-призму недалекого прошлого. И еще раз убедиться: "измы" коротки - настоящее искусство вечно.

Сона Мелоян
"Голос Армении", 7 июня, 2014

МАСТИТЫЙ УЧЕНЫЙ

Доктор искусствоведения, профессор Гравард Акопян - истинный сын земли армянской. Родившийся в Эчмиадзине мальчик с детства питал интерес к искусству, влаго рос под сенью и в ауре храмов Первопрестольного Святого Эчмиадзина... Часами он мог разглядывать росписи и картины на религиозную тему, дивясь сдержанным и столь же многообразным цветам собора. Любовь к прекрасному привела его в Художественное училище им. Ш. Терлемезяна, на факультет скульптуры. А университетское образование (исторический факультет) не только не помешало, но и помогло Будущему ученому, наряду с постижением исторических судеб родного народа, углубиться в его духовную культуру - живопись, книжную миниатюру.

Благодаря жесткому режиму спать всего несколько часов в сутки, посвяшая остальное время научной, организаторской и педагогической деятельности, Гр. Акопян приобретает очень важные для искусствоведа качества - зоркий глаз художника и пытливую мысль источниковеда. Причем, в таком авторитетном научно-исследовательском очаге, как Матенадаран им. Маштоиа, с которым он связал свою жизнь с 1960 года.

А известно, что Матенадаран - один из тех центров, который привлекал и привлекает арме- новедов и исследователей со всего света. Особый интерес искусствоведа вызывает древняя область Васпуракан, в частности все школы его миниатюры. Не случайно его кандидатская диссертация называется «Зарождение васпура- канской школы миниатюры и художники Ахтамара (XIV-XV вв.)». Гравард Акопян своими историческими и культурологическими исследованиями не только вскрыл основные школы Васпуракана (Ахтамар, Востан, Беркри, Ван, Хизан и др.), но и ввел в научный оборот десятки имен талантливых мастеров, различив отдельные школы, которые действовали одновременно или следовали одна за другой.

Творческая и научная жизнь ученого, плодотворная и кропотливая исследовательская равота многих лет обобщены в его докторской диссертации «Миниатюра Васпу- ракана (XII-XV вв.)».

Гр. Акопян - один из тех ученых, кто никогда не замыкается в тиши научных кабинетов. В годы всенародного подъема и движения за освобождение Арцаха он с энтузиазмом берется за изучение памятников средневекового искусства этого легендарного и свободолюбивого края. В итоге, в 1989 году появляется книга «Миниатюра Арцаха-Утика в XIII-XIV вв.», которой утверждается существование самоБытной и интересной школы книжной миниатюры.

В 1991 году выходит в свет книга « Средневековое искусство Ариаха», изданная, как и предыдущая, на трех языках. Спустя два года, в Берлине, на немецком языке, появляется капитальный труд «Борьба, история, культура, искусство Нагорного Карабаха (Ариаха)», созданный совместными усилиями Гр. Акопяна и рядом европейских ученых. Впервые в Европе, в начале 90-х годов

прошлого века, узнают не только о священном народно-освободи- тельном движении, но и об искусстве древнего армянского края - Ариаха...

Исследования и труды доктора искусствоведения, профессора Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна Граварда Акопяна столь весомы и внушительны, что поисти- не говорят о его уникальной трудоспособности и безмерной преданности теме всей его творческой жизни.

Его книги, статьи, брошюры изданы на армянском, русском, английском, французском, итальянском языках - в Ереване, Москве, Риме, Берлине...

Гравард Акопян, крупный ученый, посвятивший свою жизнь науке не только десятком книг, но и пропагандируя на многочисленных симпозиумах армянское средневековое искусство, пользующийся высоким авторитетом среди своих вузовских коллег по Армпе- дуниверситету, и сейчас ведет активную и плодотворную деятельность, воспитывая студенческую молодежь, присягнувшую искусству.

Мария Багдасарян
“Азг”, - культура, 29 ноября, 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրավարդ Հակոբյան.
Հայ արվեստաբանության նվիրյալը 5

Հրավարդ Հրաչյայի Հակոբյանի կյանքի և գործունեության
հիմնական տարեթվերը 15

Հրավարդ Հակոբյանի տպագիր աշխատությունները 18

Ա. մենագրություններ 18

Բ. պատկերագրքեր 19

Գ. գրքույկներ 19

Դ. հոդվածներ գիտական հանդեսներում
և ժողովածուներում 19

Ե. հոդվածներ թերթերում 22

Հրավարդ Հակոբյանի գիտական ղեկավարությամբ
պաշտպանված ատենախոսություններ 24

Գրականություն Հրավարդ Հակոբյանի և նրա
աշխատությունների մասին 25

Հրավարդ Հակոբյանի գիտական գործունեությունն
արժեւորող հոդվածներ 28

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

HRAVARD HAKOBYAN
THE ART DEVOTEE

BIOGRAPHICAL REFERENCE SOURCES

ГРАВАРД АКОПЯН
ПРЕДАННЫЙ СЛУЖИТЕЛЬ ИСКУССТВА

БИОБИБЛИОГРАФИЧЕСКИЙ СПИСОК

Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան
Էջադրումը, ձևավորումը և շապիկը՝ Անահիտ Խանզադյանի
Շապիկի նկարը՝ Հրավարդ Հակոբյանի դիմանկարը, հեղինակ՝ Արա Հակոբյան
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան

ISBN 978-9939-9237-5-8

Չափսը՝ 70 × 100/16
Տպագրական 4 մամուլ
Տպաքանակը՝ 150 օրինակ

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
Հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com